

## ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

20-րդ դարում աշխարհը ցնցեցին էթնիկական բախումների երեք ալիքներ, որոնք ավարտվեցին տասնյակ նոր, հիմնականում՝ ազգային պետությունների կազմավորմամբ: Առաջին ալիքը բարձրացավ դարասկզբի աշխարհամարտի ավարտից եւ Ավստրո-հունգարական ու Օտոմանյան կայսրությունների կործանումից հետո, որոնց տարածքում գոյացան նոր պետություններ: Երկրորդ աշխարհամարտով եւ գաղութային տերությունների փլուզմամբ սկսվեց երկրորդ ալիքը: Երրորդ ալիքն առաջացավ ԽՍՀՄ անկումից հետո: Բազմաթիվ ուսումնասիրողներ համարում են, որ այսօր մարդկությունը գտնվում է «երրորդ ալիքի» մարման փուլում, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ նոր էթնիկական ընդհարումներ համեմատաբար հազվադեպ կծագեն: Սակայն ոչ ոք չգիտի, թե երբ եւ ինչ պայմաններում կսկսվի «չորրորդ ալիքը»:

Էթնիկական բախումների առաջացման դրդապատճառները մինչ օրս մանրամասնորեն հայտնի չեն: Դրանց ծագման խնդրի վերլուծությամբ զբաղվող գիտնականների տեսակետները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի: Ուսումնասիրողների մի մասը նախապատվությունը տալիս է բացառապես նյութական շարժառիթներին (պայքար տարածքների, բնական պաշարների, տնտեսության վրա հսկողության եւ այլնի համար), իսկ մյուս մասը՝ ոչ նյութականին (քաղաքական, պատմական, կրոնական եւ այլ խնդիրներ): Երրորդ մասն այն կարծիքին է, թե էթնիկական բախումները ծագում են վերնախավերի գործողությունների հետեւանքով, որոնք տարբեր պատճառներով շահագրգռված են բռնության գործադրմամբ: Այնուամենայնիվ, այս խնդիրն ուսումնասիրողների մեծ մասը համակարծիք է, որ յուրաքանչյուր բախում իր բնույթով եզակի է եւ, համապատասխանաբար, ունի եզակի նախադրյալներ:

Ընդունված է համարել, որ էթնիկական պատերազմները տարբեր հատկանիշներով միավորված (ընդհանուր կրոն, լեզու, պատմություն, մաշկի գույն եւ այլն) մարդկանց խմբերի կողմից ազգային ինքնության համար մղվող կռիվներ են: Սակայն էթնիկական տարբերություններն ինքնին չեն հանդիսանում առճակատման պատճառ: Նման ճգնաժամերը միշտ առաջանում են միեւնույն սխեմայով.

– էթնիկ խումբը պետությունից պահանջում է իր իրավունքների եւ արտոնությունների բարելավում, քանզի բազմազգ երկրում մյուս՝ առավել բազմաքանակ ու ազդեցիկ խմբերն այդ իրավունքները փաստացի ունեն,

– դրանից հետո իշխանությունը հրաժարվում է բավարարել այդ պահանջները՝ համարելով, որ այն բացասաբար կանդիդատնա հասարակական կացության, պետության հզորության վրա եւ կարող է հանգեցնել երկրի մասնատման ու նույնիսկ կործանման,

– այնուհետեւ՝ սկսվում է բռնությունը, որը կարող է ծագել ցանկացած կողմից,

– էթնիկական փոքրամասնությունները փորձում են հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը եւ սկսում են պայքարել կամ ինքնավարության, կամ անկախության համար:

Մի շարք տեսություններ յուրովի են մեկնաբանում այդպիսի հակամարտությունների՝ «թեժ» փուլին անցնելու պատճառները, սակայն դրանք բոլորն էլ էթնիկությունը համարում են նման բռնությունների առաջացման մեխանիզմը հասկանալու բանալի: Օրինակ, գիտնականների մի մասը գլխավոր շարժառիթ համարում է պատմական հիշողության «խռովքը», երբ բռնության պոռթկումը պայմանավորվում է այնպիսի գործոնների փոփոխմամբ, որոնք հանգեցնում են ժողովրդի կամ ազգային փոքրամասնության կողմից պատմական հիշողությանը դիմելուն: «Քաղաքակրթությունների բախման» տեսության կողմնակիցները գտնում են, որ էթնիկական ընդհարումները տարբեր հասարակությունների միջեւ առաջացող մշակութային խզումների դրսեւորումներ են: Նման բախումներ կարող են ծագել նաեւ գլոբալացման եւ արդիականացման հետեւանքով, երբ բնակչության առանձին խմբեր լավ են հարմարվում փոփոխվող պայմաններին, ինչը հարուցում է «պարտվող» կողմի նախանձն ու ատելությունը:

Գոյություն ունի տեսություն, որն այս խնդիրը բացատրում է տարածքային պատճառներով. պետություններն ու ժողովուրդները միանգամայն տարբեր (ռաջիտնալ եւ իռաջիտնալ) կերպ են վերաբերվում իրենց տարածքին: Էթնոսների համար այն հաճախ հանդիսանում է ազգային ինքնության «սրբազան» մաս: Պետություններն, իրենց հերթին, ձգտում են տարածքների վրա սահմանել տնտեսական, ռազմական եւ իրավական հսկողություն: Մի շարք դեպքերում այս շահերը միմյանց հետ հակասության մեջ են մտնում, եւ սկսվում է ընդհարումը:

«Ազգայնականություն եւ էթնիկական բախում» գրքի հեղինակ Մայքլ Բրաունն առանձնացնում է այդպիսի ընդհարումների սկզբնավորման մի քանի գործոններ: Դրանցից են՝ պետության թուլությունը, խտրականություն դնող քաղաքական հաստատությունների առկայությունը, տվյալ երկրի էթնիկական աշխարհագրության յուրահատկությունները (օրինակ, երբ առանձին էթնիկ խմբեր ապրում են մեկուսացված) եւ այլն: Ընդհանրապես, Բրաունը նման պատերազմների անկյունաքար է համարում

հասարակությունում ժողովրդավարության եւ ազատականության պակասը: Իրենց հերթին, «Ազգություն, ապստամբություն եւ պատերազմ» գրքի հեղինակներ Ջեյմս Ֆիրոնն ու Դեւիդ Լեյթինը հանգել են այն հետեւության, թե այդպիսի բախումների սկսման մեջ «առաջին ջութակի» դեր են կատարում ամենեւին ոչ քաղաքական, այլ տնտեսական գործոնները:

«Էթնիկական բախման պատճառները եւ կառավարումը» աշխատության հեղինակներ Դեւիդ Լեյթն ու Դոնալդ Ռոքչայլդը կարծում են, որ էթնիկական պատերազմներն առավել հաճախ ծագում են աշխարհագրորեն մեկուսացված տարածաշրջաններում, որտեղ երկար տարիներ հավաք կերպով ապրում են անկախության (կամ «մեծ պետությունում» իշխանության) կռվի փորձ ունեցող ազգային խմբեր:

Չամաշխարհային բանկի աշխատակից, «Ունե՞ն, արդյոք, էթնիկական եւ ոչ էթնիկական պատերազմներն ընդհանուր շարժառիթներ» զեկույցի հեղինակ Նիկոլաս Սամբանիսը հանգել է այն եզրակացության, որ էթնիկական ընդհարման վտանգն աճում է, եթե հարեւան պետությունում գնում է լուրջ ներքին առճակատում կամ պատերազմ: Բացի այդ, որքան ժողովրդավար ու ազատական են հարեւան երկրները, այնքան փոքր է նման արյունահեղության սկսման հավանականությունը:

Չամաշխարհային բանկի աշխատակիցներ Փոլ Քոլերը եւ Անկե Յեֆլերը վերլուծել են այս խնդրի տնտեսական կողմն ու եկել այն հետեւության, որ էթնիկական բախման հավանականությունը կախված է էթնիկ փոքրամասնության կենսամակարդակից: Որքան նյութապես ապահով է «խնդրահարույց» տարածաշրջանի ազգաբնակչությունը, այնքան մեծ են պատերազմ սկսելու համար անհրաժեշտ միջոցներ ստանալու ապստամբների հնարավորությունները: Բացի այդ, զգալի դեր է խաղում հարուստ եւ ազդեցիկ սփյուռքի առկայությունը, որը, որպես կանոն, աջակցում է այդ շարժումներին: Քոլերի ու Յեֆլերի կարծիքով, որքան բազմազան եւ ժողովրդավար է հասարակությունը, այնքան փոքր է զինված էթնիկական ընդհարման կամ քաղաքացիական պատերազմի հավանականությունը:

«Ինչո՞ւ են մարտնչում ապստամբները» գրքի հեղինակ Թեդ Ռոբերտ Չարի տվյալներով, գոյություն ունեն մի քանի համապարփակ հատկանիշներ, որոնցով հնարավոր է գուշակել անկախության համար զինված պայքարի սկիզբը:

1. Էթնիկական կամ կրոնական փոքրամասնությանը պատկանող խումբը պահանջում է ավելի մեծ ինքնավարություն, քան ունի ներկա պահին: Դեպքերի ճնշող մեծամասնությունում այս հարցերը լուծվում են քաղաքական ու տնտեսական մեթոդներով:

2. Մոտ 60 տոկոսով ռազմական գործողությունների սկսման վտանգը

մեծանում է, եթե փոքրամասնությունը մի ժամանակ ունեցել է պետականություն: Նշանակություն չունի, թե երբ եւ որտեղ է եղել այդ պետական կազմավորումը, ինչ կերպ է ստեղծվել, կառավարման ինչ ձեւ է ունեցել եւ ինչ պատճառներով է կորցրել անկախությունը: Օրինակ, կանադական Քվեբեկ նահանգի բնակիչները, որոնք Ֆրանսիական գաղութաբնակների սերունդներ են, պահանջում են անկախություն՝ հիմնավորելով դա նրանով, որ ժամանակին Կանադան եղել է Ֆրանսիայի գաղութ: Առավել վտանգավոր է, երբ անկախության կորուստը տեղի է ունեցել ոչ հեռու անցյալում:

3. Որքան մեծ է անկախության օգտին հանդես եկող խմբի կազմակերպվածությունը, այնքան մեծ է նրա կողմից զինված պայքար սկսելու հավանականությունը: Վատ կազմակերպված անջատողականների համեմատ՝ այս դեպքում վտանգն աճում է մոտ 80 տոկոսով: Օրինակ, բողոքական Մեծ Բրիտանիայի կազմում գտնվող Յուսիսային Իռլանդիայի կաթոլիկ բնակչության ինքնորոշման ցանկությունը նրա կողմից չամրապնդվեց հզոր վարչական կառույցների ձեւավորմամբ: Չնայած նրան, որ կաթոլիկները կարողացան ստեղծել մի քանի զորեղ ահաբեկչական խմբեր, սակայն բնակչության մեծ մասի շահերը ներկայացնող ընդհանուր կազմակերպական կենտրոն չհիմնվեց: Համանման գործընթացներ տեղի են ունենում նաեւ հետխորհրդային պետություններում ապրող էթնիկ ռուսների մոտ: Նրանք պարբերաբար հանդես են գալիս առանձին մարզերի կամ շրջանների ինքնավարության կամ դրանք Ռուսաստանին միացնելու օգտին, սակայն այդպիսի գործունեությունն արդյունք չի տալիս:

4. Որքան ինքնորոշման հավակնություն ունեցող տարածաշրջանում ենթակառույցների ու տեղեկատվական տեխնոլոգիաների հարցում գործերը հաջող են ընթանում, այնքան մեծանում է մարտական գործողությունների սկսման հավանականությունը: Եթե որոշակի էթնիկ խումբ գտնվում է մի պետության ենթակայության տակ եւ ապրում է հավաք տարածքում, ապա կապի գործոնը (հեռախոս, ռադիոկայան եւն) հատուկ դեր չի խաղում: Բայց դրա նշանակությունը բազմակի աճում է, եթե էթնիկ կամ կրոնական խումբը «բաժանված» է երկու եւ ավելի պետությունների միջեւ. օրինակ, այսպես պատահեց Սերբիայի, Ալբանիայի ու Մակեդոնիայի միջեւ «բաժանված» ալբանացիների, Ֆրանսիայի եւ Իսպանիայի բասկերի, Ռուսաստանի ու Ադրբեջանի լեզգիների, Ռուսաստանի եւ Վրաստանի չեչենների հետ:

5. Որքան բարձր է ծնելիության մակարդակը էթնիկ կամ կրոնական խմբերում, այնքան մեծ է ինքնորոշման համար պատերազմ սկսելու հավանականությունը: Ծնելիության ցածր մակարդակը կարող է փոխհատուցվել մեծ թվով գաղթականների հոսքով եւ այլն:

6. Պարադոքս է, սակայն որքան քիչ է այս կամ այն էթնիկ կամ կրոնական խումբը տառապում կենտրոնական իշխանության բռնություններից ու խտրական քաղաքականությունից, այնքան մեծ է զինված պայքարի սկսման հավանականությունը: Հետաքրքրական է, որ ներկայումս ինքնորոշման օգտին հանդես եկող խմբերի մեծ մասը գործում է ժողովրդավարական երկրներում: Դեռ ավելին, անկախության մասին խոսակցություններն սկսվեցին լուկ այն բանից հետո, երբ պետություններն անցան կառավարման ժողովրդավարական ձևին:

7. Ռազմական գործողությունների սկսման հավանականությունն առավել մեծ է, եթե տվյալ կրոնական կամ էթնիկ խմբի ներկայացուցիչներն արդեն նման պայքար մղել են:

### **Washington Profile**

## ԿԻՐԳԻՉԱԿԱՆ ԴՐԱՄԱ

### **Շարունակական հեղափոխություն**

Կիրգիզիայի նախագահ Ասկար Ակաեւի վարչակարգն ընկավ: Լքելով նախագահական նստավայրը՝ Ակաեւն իրավապահ մարմիններին հրամայեց ուժ չգործադրել: Եվ դարձավ քաղաքական դիակ:

«Ընդդիմության առաջնորդներն իրավիճակին չեն տիրապետում: Օվկիանոսից այն կողմ գտնվողները, ովքեր նրանց պատրաստեցին որպես Ակաեւի փտած վարչակարգը տապալողներ, չեն հարցնի, թե ինչ են ուզում Օթունբաեւան, Բակիեւը եւ մյուսները»,–ասում է Սահմանային համագործակցության ասոցիացիայի ռազմավարական ծրագրման ծառայության ղեկավար Ալեքսանդր Սոբյանինը: Փորձագետի կարծիքով, թեւ ընդդիմադիրներից ոչ ոք հանդես չի գալիս երկրի մասնատման օգտին, սակայն դա անխուսափելի է: «Ակաեւի հեռանալուց հետո Օշն ու Բիշքեկը դե ֆակտո, առանց դե յուրե ձեւակերպման, կդառնան երկու Կիրգիզիաների կենտրոններ»,–հավաստիացնում է նա:

«Խոշոր ընդդիմադիր առաջնորդները երեքն են»,–գտնում է «ЦентрАзия» հայտնի ինտերնետային կայքի գլխավոր խմբագիր, քաղաքագետ Վիտալի Խյուլպինը: Կուրմանբեկ Բակիեւը կշռադատված, չափավոր քաղաքական գործիչ է, որը կհավասարակշռի Ռուսաստանի, ԱՄՆ եւ Չինաստանի շահերը: Արտաքին գործերի նախկին նախարար, Բակիեւի հավանական հակառակորդ Ռոզա Օթունբաեւան անհամեմատ ավելի արեւմտամետ գործիչ է: «Նա բացահայտ կերպով համակրում է Վրաստանին, երկար ժամանակ աշխատել է այնտեղ, մոտ եղել Սահակաշվիլու շրջապատին»: Ցուցարարների կողմից ազատված քաղբանտարկյալ Ֆելիքս Կուլովը դասական գործնապաշտ ուժային է: «Համակրանքների եւ կողմնորոշումների համատեքստում նա Բակիեւի ու Օթունբաեւայի միջեւ միջանկյալ դիրք է գրավում»,–ասում է քաղաքագետը:

Բայց, ընդհանուր առմամբ, ընդդիմության առաջնորդները ռուսամետ չեն: «Նրանց ջախջախիչ մեծամասնությունը սնվել է զանազան դրամաշնորհներից եւ հասունացել ոչ կառավարական կազմակերպությունների շարքերում»,–ամփոփում է Խյուլպինը: Որոշ տվյալներով, կիրգիզական ոչ կառավարական կազմակերպությունների հոսքային բյուջեն մոտավորապես հավասար է եղել երկրի պետբյուջեին: Հասկանալի է՝ դրամաշնորհները Ռուսաստանը չի տվել:

Իհարկե, դա ամենեւին չի նշանակում, թե «նորացված» Կիրգիզիան

անմիջապես «դուրս կվճռի» իր ռազմավարական գործընկերոջը: «Կարծում եմ, թե՛ Կուլովը, թե՛ Բակիելը Ռուսաստանի դեմ ոչ մի կտրուկ քայլ չեն ձեռնարկի, հատկապես, եթե հաշվի առնենք, որ Բակիելի նախատեսվող առաջնորդությունն անվիճելի չէ, իսկ ընդդիմությանը դեռ հարկ է լինելու գնալ «ազատ» նախագահական ընտրությունների», – գտնում է Խլուպինը: Հաղթանակի համար անհրաժեշտ է «հյուսիսցիների» աջակցությունը կամ գոնե չեզոքությունը, եւ այս դեպքում բազմակի աճում է «հյուսիսցի» Կուլովի կշիռը: «Նա վարչակարգի «զոհ» է, ունի խարիզմա, կապեր Ռուսաստանի ուժայինների եւ Միացյալ Նահանգների հետ: Կարծում եմ, եթե իրավիճակը կայունանա, տառացիորեն աչքի առաջ իշխանությունը կսկսի «հոսել» նրա ձեռքը», – ենթադրում է քաղաքագետը:

Ռուսաստանի ազդեցության ու հեղինակության նվազանը զուգընթաց, տեղի է ունենում Կենտրոնական Ասիայի մյուս երկրների «ժողովրդավարացման» ծրագրերի ֆինանսավորման ավելացում:

Իսկ Կիրգիզիայի առջև հառնում է յուրատեսակ «աֆղանացման» ուրվականը: «Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ իրավիճակը հանրապետությունում կզարգանա 1990-ականների սկզբի տաջիկական սցենարով», – գտնում է Քաղաքական փորձագետների եւ խորհրդականների ասոցիացիայի խորհրդի անդամ Վլադիմիր Գորյունովը: Ու եթե նույնիսկ արտաքին ուժերի (ԵԱՀԿ եւ ԱՄՆ) միջամտության հետեւանքով ամեն ինչ քիչ թե շատ կարգավորվի, միեւնույն է՝ իրադարձությունների տարածումը չի փոխվի:

Սակայն հակասությունները Կիրգիզիայում քաղաքական չեն. ավելի շուտ դրանք կլանային, տնտեսական եւ կրոնական են: «Անմիջապես կամ ոչ անմիջապես, բայց հարավային շրջաններից է սկսվելու ապակայունացումը: Արդյունքում Կիրգիզիան վերածվելու է հերթական անկառավարելի տարածքի՝ տարբեր տիպի ահաբեկիչների կուտակման բարենպաստ դաշտի, ինչպիսին այսօր Իրաքն ու Աֆղանստանն են», – կանխատեսում է Գորյունովը:

«Կիրգիզական հեղափոխությունն անխուսափելիորեն «կմաքի» Ակաեւի օրոք եղած տեղական օլիգարխներին եւ նախարարներին», – հանդգնած է Սոբյանինը: Նրանք նույնիսկ փողով էլ չեն փրկվի: «Ուկրաինայի ու Վրաստանի մահերի շղթան չպետք է կասկածներ թողնի, թե Կիրգիզիան բացառություն կկազմի: Կախված Ակաեւի հետ անձնական մտերմությունից՝ նրանք կան պետք է Կիրգիզիայում իրենց փրկեն, կան «մեղսավոր հեղափոխական անպատժելիությունից» հեռու փախչեն», – կարծում է փորձագետը:

«Դեպքերի հետագա զարգացման առանցքային խնդիրն է, թե ով Օչում ավելի շուտ ռազմակայան կհիմնի՝ Միացյալ Նահանգները, թե՞

Ռուսաստանը: Դրանով կվճռվի, թե ով կարողացավ ավելի լավ անցկացնել Մեծ Խաղի այս փոքր խաղափուլը, որը սկսվեց Կենտրոնական Ասիայի երկրներին տիրելու ԱՄՆ որոշումից հետո: Ռուսաստանը դեռ նույնիսկ չի գիտակցել, թե ինչու են ամերիկացիներն այդպես նետվում Օշ եւ Ալայան հովիտ»,–համոզված է Սոբյանինը: Փորձագետը գտնում է, որ ռուսներին հարկավոր է շուտափույթ կերպով Օշում ռազմական տեղադրել՝ գործելով դեպի Պրիշտինա հայտնի ռազմերթի սկզբունքով. պատերազմն ամեն ինչ մոռացնել կտա: Սակայն արդեն պարզ է, որ նման բան Մոսկվան չի պատրաստվում ձեռնարկել:

Ըստ էության, Կիրգիզիայի իրավիճակի վերաբերյալ Ռուսաստանը դիրքորոշում չի ունեցել: Մոսկվան դիտորդի դերում էր. կարծես իրեն դա չէր վերաբերում: Ռուսական պաշտոնատար անձանց հայտարարությունները բացահայտեցին ոչ միայն նրանց՝ որպես երկրի արտաքին քաղաքականությունը ձեւավորող պետական գործիչների, ծայրաստիճան անհրազեկությունը, այլեւ անկարողությունը: Մասնավորապես, Լյուբով Սլիսկան հանդես եկավ այն համոզմամբ, թե Ակաեւը «կիրգիզ ժողովրդի մեջ բավականին մեծ հեղինակություն ու վստահություն է վայելում»: Երբ ջարդարարներն արդեն ներխուժել էին կառավարության շենք, ՌԴ վարչապետ Միխայիլ Ֆրադկովը դեռ կրկնում էր, թե «հարցերը պետք է լուծել՝ մնալով իրավական դաշտում, պահպանելով սահմանադրությունը եւ գործող օրենսդրությունը»:

Սակայն «ծիսական» հորդորներն այստեղ տեղին չէին: Դա հասկանում էին ԱՄՆ Պետդեպարտամենտում, որտեղ նախընտրեցին դիմել հստակ ու հասկանալի ցուցումների: Վաշինգտոնը Կիրգիզիայի կառավարությանը կոչ արեց երկխոսություն սկսել ընդդիմության հետ՝ առաջ չքաշելով ոչ մի նախապայման: Ո՞ւմ գիրկը նետվեց Ակաեւը, երբ պարզ դարձավ, որ իշխանությունը պահել չի հաջողվի. ամենեւին ոչ ռուսական դեսպանատան, այլ ԵԱՀԿ-ի: Թեպետ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, արտաքին քաղաքականության եւ անվտանգության գծով Եվրախորհրդի գերագույն հանձնակատար Խավիեր Սոլանայի հետ Կիրգիզիայի իրավիճակը քննարկելիս, զրուցակցի ուշադրությունը հրավիրեց նրա հրապարակային հայտարարությունների հակաարդյունավետ լինելու վրա, արդեն որերորդ անգամ «հակաարդյունավետ» դուրս եկավ ռուսական ԱԳՆ անգործությունը:

«Չեղափոխության հերթում» ո՞վ է լինելու հաջորդը: «Ադրբեջանը եւ Ուզբեկստանը»,–ենթադրում է Սոբյանինը: «Մոտ ժամանակներս պետք է սպասել լարվածության աճի Տաջիկստանում եւ Ուզբեկստանում, ինչպես նաեւ Ադրբեջանում ու Հայաստանում»,–նրան երկրորդում է Գորյունովը:–Ընդ որում, այն, որ հաջորդ «ժողովրդական ապստամբությունը» մենք

կտեսնենք հատկապես թվարկված պետություններից վերջինում՝ շատ հավանական է. ինչպես եւ Կիրգիզիան, Հայաստանը նույնպես հանդիսանում է Ռուսաստանի ռազմավարական գործընկերը եւ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ, նրա տարածքում տեղակայված է ռուսական ռազմակայան, մինչդեռ ՌԴ հետ մա անմիջական սահման չունի»:

Գրեթե հաստատապես, ասիական նոր «հեղափոխությունների» կազմակերպիչների ջանքերը կուղղվեն «իսլամական գործունի» աշխուժացմանը: Այս շղթայի ծայրին, վերջինը Ռուսաստանից առաջ, թերեւս Ղազախստանն է: Խյուլպինն, ընդհակառակը, Ղազախստանին տալիս է «առաջնության դափնին»: «Երկրորդ տեղում Ուզբեկստանն է, – ենթադրում է մա:– Կիրգիզական «խռովության» գլխավոր կենտրոնը Ֆերգանայի հովտի Օշ եւ Ջալալաբադ քաղաքներն են: Իսկ այնտեղից մինչեւ Ուզբեկստանի սահմանը ձեռքն էլ կհասնի: Ամեն դեպքում՝ գործընթացը լինելու է հարածուն: Երկար չենք սպասի»:

Վերլուծաբանների մեծ մասը Կիրգիզիայում լուրջ ապակայունություն կանխատեսում էր հոկտեմբերյան նախագահական ընտրությունների շրջանում: Երեւում է՝ հետխորհրդային տարածքում պատմական գործընթացներն առաջ են ընկնում:

### **Աշխարհաքաղաքականություն**

Մինչ Կիրգիզիայում թափ էր առնում «կակաչների հեղափոխությունը», Պեկինն իր Սինցզյան իսլամական ծայրագավառում սկսեց 3 հազար կմ ընդհանուր երկարությամբ ռազմավարական նշանակության նավթամուղի 240 կմ-անոց հատվածի շինարարությունը: Ղազախստանին միացնող այս ճանապարհով Չինաստան պիտի հոսի Կասպիական նավթը: Սակայն Միջին Ասիայի «բալկանացման» ալիքը, որն ընդունակ է տարածվել Կիրգիզիայից դուրս, կարող է խոչընդոտել նավթամուղի շինարարությանը եւ ապակայունացնել Սինցզյանը, ինչը կվտանգի ոչ միայն նավթի առաքումները Չինաստան, որն այս վառելանյութի սպառման ծավալներով աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը, այլեւ երկրի տարածքային ամբողջականությունը:

«Le Monde» հանդեսի մոսկովյան թղթակից Նաթալի Նուգայրեդն իր հոդվածում պնդում է, թե «կակաչների հեղափոխությունը» թուլացնելու է Միջին Ասիայում Ռուսաստանի դիրքերը, ինչը նշանակում է Ջորջ Բուշի դիվանագիտության հաղթանակ տարածաշրջանում, որտեղ 2001թ. ռուսների օրհնությամբ տեղակայվեցին ամերիկյան ռազմակայաններ: Կիրգիզիայում ԱՄՆ դեսպան Սթիվեն Յանգը հանդիսավոր կերպով շեշտեց

Վաշինգտոնի դերը հեղափոխությունում, մինչդեռ Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտը սյուռեալիստական ոճով հայտարարեց, թե «կապ է պահպանել իր ռուս բարեկամների ու Կիրգիզիայի բոլոր միջինասիական հարեւանների հետ՝ ջանալով բոլորի հետ մնալ նույն «հաճախության» վրա»:

«Le Monde»-ի վերոհիշյալ հոդվածում մեջբերված է «Россия в глобальной политике» հանդեսի խմբագիր Ֆյոդոր Լուկյանովի խոսքը, որտեղ նախազգուշացվում է, թե «ժողովրդավարության կայծի փոխարեն կարող է եւս մեկ հրդեհ բռնկվել»: Ղա բացատրվում է նրանով, որ բազմազգ իսլամական երկրում նման իրավիճակի տարածումը կարող է հարավում բնակվող կիրգիզների եւ ուզբեկների միջեւ կրկնել 1990-ականների արյունալի բախումները:

Պատերազմի հրդեհը կարող է տարածվել ոչ միայն կենսականորեն կարելոր Ֆերգանայի հովտի՝ ողջ Միջին Ասիայի ամենաբերրի հողատարածքի վրա, որտեղ սրբազան պատերազմի ելած սալաֆիտները վաղուց երազում են ստեղծել վերազգային խալիֆաթ, այլեւ Ղազախստանի ու գերազանցապես մահմեդականներով բնակեցված չինական Սինցյան ռազմավարապես կարելոր ծայրագավառի վրա:

Նեոպահպանողականների եւ «Լիկուդ» կուսակցության հետ կապեր ունեցող բրիտանական «The Daily Telegraph» թերթը նշում է, որ «Կիրգիզիան հեռավոր միջինասիական հանրապետություն է, որտեղ, այնուամենայնիվ, գլոբալ ահաբեկչության դեմ պայքարում հատվում են Միացյալ Նահանգների, Չինաստանի ու Ռուսաստանի շահերը»: Այնուհետեւ ասվում է, թե Կիրգիզիայի դիրքը հանգեցրել է երկրի մայրաքաղաք Բիշքեկի մոտակայքում ամերիկյան եւ ռուսական ռազմակայանների ստեղծմանը, ինչպես նաեւ Չինաստանի հետ հակաահաբեկչական համատեղ զորավարությունների անցկացմանը: Ամփոփելով արդյունքները՝ թերթը գրում է. «Կիրգիզական ժողովրդավարության ամրապնդումը լուրջ ազդեցություն կունենա ավտորիտար առաջնորդների ղեկավարմամբ բնորոշվող տարածաշրջանի վրա»:

Կիրգիզիայում առկա է «հյուսիս – հարավ» բաժանումը, ինչը կարող է վերածվել երկրի «բալկանացման» եւ սահմաններում առաջացնել, ավելի շուտ, էթնիկական բախումներ, քան «ժողովրդավարական ալեկոծություն»: Երկրի հարավում ապրում է ծայրահեղ պահպանողական եւ աղքատ ուզբեկ փոքրամասնությունը (14-20 տոկոս), մինչդեռ հյուսիսում բնակվում է առավել հարուստ, քաղաքներում կենտրոնացած կիրգիզ մեծամասնությունը (65 տոկոս), որը վերահսկում է (վերահսկում էր) իշխանությունն ու տնտեսությունը: Այստեղ է բնակվում նաեւ ռուսների բավականին զգալի մասը (12,5 տոկոս): Աղքատացող Կիրգիզիան խիստ կախվա-

ծության մեջ է ուզեկական գազի ներմուծումից, սակայն, շնորհիվ Տյան-Շանի լեռների մեծ լճերին մոտ գտնվելու իր դիրքի, նա, միաժամանակ, հանդիսանում է ջրաբաշխ տերություն, ինչն ամենեւին էլ քիչ կարելու չէ անապատների ու տափաստանների տարածաշրջանի համար:

1990թ. երկրի հարավում գտնվող Օշ քաղաքում տեղի ունեցան արյունալի ընդհարումներ ուզբեկների եւ կիրգիզների միջեւ: 16 տարի անց հենց այս ուզբեկական քաղաքում ծնվեց «կակաչների հեղափոխությունը»՝ միջինասիական ցեղերի ու կլանների շահերի բախման ժողովրդավարական նմանակը: Այսպիսին է կատարվող իրադարձությունների տեղական մասշտաբը: Տարածաշրջանային մասշտաբով (ներառյալ Պարսից ծոցը եւ Կասպիական ծովը, որոնք նավթի համաշխարհային պաշարներով համապատասխանաբար առաջին ու երրորդ հանքավայրերն են) ամերիկացիները կիրառում են «քաղաքակրթությունների բախում» հասկացությունը: Միացյալ Նահանգներն այն օգտագործում են «սեւ ոսկու» հանքավայրերի եւ իր երեք աշխարհաքաղաքական մրցակիցների՝ Ռուսաստանի, Չինաստանի ու Չինաստանի սահմանին նավթամուղների վրա հսկողություն իրականացնելու համար:

Մ.Քիդրաքունարը «The Asia Times»-ի իր հոդվածում նշում է, որ Ֆերգանայի հովտի ուրվականը հետապնդում է Միջին Ասիային՝ դժգոհ անցած դարի 20-ականներին սահմանների բռնի եւ արհեստական անցկացումից: Փոխանակ Ֆերգանայի հովիտը ամբողջությամբ թողնվեր Ուզբեկստանին, Ստալինն «անդամահատեց» Օշն ու Ջալալաբադը՝ տալով դրանք Կիրգիզիային: Դրանց փոխարեն Ուզբեկստանին նվիրվեցին տաջիկական երկու հոյակապ քաղաքներ՝ Բուխարան եւ Սամարղանդը: Անցյալի ուրվականները կարող են կրկին վերադառնալ ու «պայթեցնել» Ֆերգանայի հովտի՝ Միջին Ասիայի ամենախիտ բնակեցված գոտու եւ կենսականորեն կարելու կենտրոնի շուրջն ապրող բազմազգ հասարակությունը:

Միելնույն ժամանակ «Stratfor»-ի տնօրեն Ջորջ Ֆրիդմանն իր «Կիրգիզիա. մեծ տերությունների հարաբերություններին սպառնացող նոր վտանգներ» հրապարակման մեջ ենթադրություն է անում, թե բիշքեկյան իրադարձությունները, որ մեծացրին միջինասիական տարածաշրջանում Միացյալ Նահանգների ազդեցությունը, կարող են ներգործել Ռուսաստանի ու Չինաստանի հետ նրա հարաբերությունների վրա: Ֆրիդմանի կարծիքով, ռուս ղեկավարները, որոնք նպաստեցին Միջին Ասիայում ամերիկյան ռազմակայանների ստեղծմանը, մտահոգ են, թե ԱՄՆ-ը կարող է օգտվել իր զորակազմից՝ «այնպիսի աշխարհաքաղաքական իրադրություն ստեղծելու համար, որի դեպքում Ռուսաստանը կզրկվի տարածաշրջանում իր ազդեցության ոլորտից»:

Ֆրիդմանի ենթադրմանը, չինացիները եւս մտահոգված են, քանզի

Միջին Ասիայի անկայուն իրավիճակը Սինցզյանի անջատողականներին զենքի մատակարարումը մեծացնելու նպաստավոր պայմաններ կստեղծի, ինչը նրանք ընկալում են որպես Չինաստանին սպառնացող ամերիկյան ռազմավարության մաս:

Նախկին «Մետաքսի ճանապարհն» այսօր վերածվել է նավթայինի, որի հիմնական հետազոծերը՝ Թուրքիայից Պակիստան եւ Պարսից ծոցից Չինաստան, անցնում են «Սամարղանդի շրջանով»: Թերեւս, որեւէ երազող կարող է պատկերացնել Ռուսաստանի, Չինաստանի ու Միացյալ Նահանգների ներդաշնակ միասնությունը, երբ նրանք Ասիայի կենտրոնում համատեղ կարողունահանեն նավթը, գազը, հանքանյութերը, սակայն տխուր իրականությունն այն է, որ երեք խոշոր գերտերություններն անթաքույց պայքար են մղում նախկին «Մետաքսի ճանապարհի» վերահսկման համար:

*Նյութը պատրաստվել է [www.rosbalt.ru](http://www.rosbalt.ru) եւ [www.inosmi.ru](http://www.inosmi.ru)  
կայքերի հրապարակումների հիման վրա*

## **ԹԱԼԻՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ** **Արսեն Հակոբյան**

1999թ. Ադրբեջանում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն, երկրի խոշոր ազգային փոքրամասնություններից են թալիշները, որոնք հաշվվում էին 76,8 հազար կամ բնակչության մոտ 1%-ը, սակայն նույն ադրբեջանական փորձագիտական տվյալները փաստում են մոտ 200-250 հազար թալիշների գոյության մասին: Ավելին, համաձայն 1999-2000թթ. ամերիկյան հետազոտողների ուսումնասիրությունների, Ադրբեջանի թալիշաբնակ շրջաններում թալիշների թիվը հասնում է 500.000-ի, իսկ որոշ թալիշական աղբյուրներ վկայակոչում են Ադրբեջանում մինչև 1 մլն թալիշների գոյության մասին:

Ներկայումս Ադրբեջանում թալիշները հավաքականորեն բնակվում են Լենքորանի, Մասալինյան, Աստարայի եւ Յարդիմլի շրջաններում:

Թալիշները իրանական ժողովուրդ են, որոնք վաղնջական ժամանակներից բնակվում են Կասպից ծովի հարավարեւմտյան ափերին եւ պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել են Մարաստանի, Պարսկաստանի կազմում: 18-րդ դ. կեսերին Նադիր շահի սպանությունից հետո կազմավորվում է Թալիշի խանությունը, որը հետագայում՝ Իրանի ու Ռուսաստանի միջև կնքված 1813թ. Գյուլիստանի եւ 1828թ. Թուրքմենչայի պայմանագրերով անցնում է Ռուսական կայսրությանը: Թալիշների մի մասը հայտնվում է ռուսական, իսկ մի մասն էլ՝ իրանական տիրապետության ներքո:

1918թ. խառը ժամանակամիջոցում Անդրկովկասի թալիշաբնակ շրջաններում կազմավորվում է Մուղանի ինքնավար միավորումը, որը որոշ ժամանակ անց հռչակվում է խորհրդային հանրապետություն, սակայն 1919թ. Բաքվի մուսավաթական իշխանությունները այն վերացնում են ու կցում Ադրբեջանին:

Ներկայումս, թալիշական իրավունքների համատեքստում, 1919թ. իրադարձություններն ակտիվորեն շրջանառվում են՝ ներկայացվելով որպես ինքնիշխանության եւ միաժամանակ Ադրբեջանի հետ բացասական համակեցության օրինակ, քանի որ թե՛ 1919թ., թե՛ 1993թ. թալիշական ինքնավարությունները վերացվեցին Բաքվի կողմից:

Թալիշները երկար տարիներ շարունակ ենթարկվել են Ադրբեջանում վարվող ձուլման եւ թրջացման քաղաքականությանը՝ սկսած դեռեւս 1920-ական թթ.:

1926թ. մարդահամարի համաձայն, խորհրդային Ադրբեջանում բնակվում էին 77 հազար 323 թալիշ: Մինչև 1936-37թթ. Ադրբեջանում գործում էին թալիշական դպրոցներ, հրատարակվում դասագրքեր եւ ձեռնարկներ, կար «Կարմիր Թալիշ» թերթը, ռադիոժամ: 1939թ. վիճակագրական տեղեկությունների համաձայն, Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրում էին 87,5 հազար թալիշ: 1936-1937թթ. հետո, երբ խորհրդային Միությունը որդեգրեց «նոր» ազգային քաղաքականություն, ինչը հատկապես արտահայտվեց ԽՍՀՄ նոր սահմանադրության քննարկման ժամանակ Ստալինի ելույթում, Ադրբեջանում ձուլման գործընթացները եւ այլ ժողովուրդներ «չճանաչելու» միտումները առավել հստակ դրսևորվեցին: Դրան գումարվում էր նաեւ այն, որ թալիշաբնակ տարածքները, սահմանակից լինելով Իրանին, «փակ» գոտի հայտարարվեցին՝ անցագրային ռեժիմով: Այս պայմաններում, բնականաբար, ցանկացած այլախոհական ազգային շարժում դատապարտված էր: Եթե ընդունենք, որ խորհրդային գաղափարախոսական պարտադրանքին գումարվում էին նաեւ տեղական ադրբեջանական գործոնն ու այդ հանրապետության իշխանությունների հայտնի մոտեցումները ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա: Ստալինյան բռնությունների տարիներին, թալիշական աղբյուրների վկայությամբ, խորհրդային իշխանության դեմ հանցագործություն էր համարվում խոսել, գրել թալիշերեն:

Ըստ որոշ տեղեկությունների, Ադրբեջանի իշխանությունները միտումնավոր սոցիալ-տնտեսական ծանր պայմաններ էին ստեղծում այդ ռեգիոնի համար: Օրինակ՝ նույնիսկ 1989թ. գյուղատնտեսական աշխատանքներում կիրառվում էր ձեռքի աշխատանքը, ավանդաբար բնակչության մեծ աճ ունեցող շրջանում անմխիթար էր նաեւ բնակարանային շինարարության խնդիրը: Միեւնույն ժամանակ պետական-գաղափարախոսական խողովակներով անընդհատ քարոզվում էին ադրբեջանցիների ու թալիշների միջեւ կենցաղամշակութային ընդհանրությունների մասին՝ ուղղակիորեն կոչ անելով «բնական» ձուլման անհրաժեշտության ու անխուսափելիության: Դրա վկայություններից է, թերեւս, այն, որ խորհրդային տարիներին հրապարակված հանրագիտարանային մի շարք աշխատություններում թալիշները ներկայացվում են հենց այս դիտանկյունով. ինչ-որ «վերապրուկային» խումբ, որը շուտով ամբողջապես ձուլվելու է ադրբեջանցիների կազմում: Այս միտումների տրամաբանական արտահայտությունն էր այն, որ 1959թ. մարդահամարը վավերացնում է ընդամենը 100 հոգի թալիշ, իսկ 1970, 1979թթ. մարդահամարներում թալիշներն ընդհանրապես չեն հիշատակվում: 1989թ. մարդահամարը Ադրբեջանի տարածքում գրանցում է սոսկ 21,2 հազար թալիշ բնակչության 0,3%:

Այնուամենայնիվ, 1980-ական թթ. վերջերին ԽՍՀՄ-ում սկիզբ առած

ազգային ու ժողովրդավարական շարժումները եւ ընդհանուր մթնոլորտը հույսեր արթնացրին նաեւ թալիշների մեջ:

1989թ. թալիշ մտավորականները «Իզվեստիա» թերթի միջոցով բաց նամակով դիմում են ԽՄԿԿ Կենտկոմ՝ պահանջելով իրենց մշակութային ինքնավարություն տալ՝ նկարագրելով, որ ադրբեջանական իշխանությունները պարբերաբար ոտնահարել են թալիշների ազգային եւ մշակութային իրավունքները:

Սակայն Ադրբեջանի թալիշների ազգային իրավունքների վերականգնմանն ուղղված գործընթացներն այլ հունով ընթացան:

Ադրբեջանում թալիշական խնդիրը սրվեց հատկապես 1990-ական թթ.: 1990թ. հունվարյան հայտնի իրադարձությունների ընթացքում Լենքորանում տեղական ուժերը՝ Ալաքրամ Գումբատովի ղեկավարությամբ, որը մինչ այդ ավտոձեռնարկության գլխավոր տնօրենի տեղակալն էր, 10 օրվա ընթացքում տապալում են խորհրդային իշխանությունը: Այնուհետեւ թալիշների ապագա առաջնորդի քաղաքական կարիերան հատվում է Ադրբեջանի ժողովրդական ճակատի հետ, սակայն որոշ տարածայնությունների պատճառով 1990թ. նա դառնում է Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության փոխնախագահ: Նրա ջանքերով զինաթափվում է Լենքորանից դուրս բերվող խորհրդային զինուժը, եւ այդ զինամթերքով կազմավորվում է Լենքորանյան գումարտակը: Այնուհետեւ Գումբատովը նշանակվում է պաշտպանության փոխնախարար, սակայն երկար չի մնում այդ պաշտոնում:

1993թ. հունիսին, երբ Ադրբեջանը քաղաքացիական բախումների թատերաբեմ էր դարձել, Գումբատովը, հենվելով Լենքորանյան գումարտակի վրա, դառնում է քաղաքի վարչակազմի ղեկավար, իսկ հունիսի 21-ին հռչակում Թալիշ-Մուղանի ինքնավար հանրապետության կազմավորումը Ադրբեջանի կազմում, որը գոյատևում է մինչեւ 1993թ. օգոստոս:

Այնուհետեւ Ադրբեջանի ղեկավար Չեյդար Ալիեւի հրամանով թալիշների առաջնորդը ձերբակալվում է, դատապարտվում մահապատժի, որը հետո փոխարինվում է ցմահ ազատազրկմամբ: Չետաքրքրական է, որ նույնիսկ դատավարությունների ժամանակ Գումբատովը նշում է Ադրբեջանում թալիշների իրավունքների պարբերաբար ոտնահարման մասին եւ իր քայլերը բացատրում այդ կերպ:

2004թ. Եվրախորհրդի ճնշման հետեւանքով Գումբատովին ներում է շնորհվում, եւ նա տարագրվում է Նիդեռլանդներ: Չետաքրքրական է, որ թալիշական շարժման ձերբակալված ղեկավարներն ազատվելուց հետո երկար չեն ապրում, եւ դա բացատրվում է նրանց նկատմամբ իշխանությունների առանձնահատուկ դաժանությամբ: Նրանց մի մասը, խուսափելով հետապնդումներից, գտնվում է Մոսկվայում, օրինակ՝ Թալիշ-

Մուղանական հանրապետության մեջլիսի նախագահ Ֆարահդին Աբասովը եւ ուրիշներ, իսկ Գումբատովի տիկինն ավելի վաղ էր տարագրվել Նիդեռլանդներ:

Ներկայումս թալիշական ազգային շարժումը ոչ միայն ընդդիմադիր է իշխանություններին, այլեւ բոլոր այն քաղաքական ուժերին, հոսանքներին, որոնք արտաքին քաղաքականության մեջ հանդես են գալիս արեւմտամետ եւ թուրքամետ դիրքերից, իսկ ներքին ասպարեզում ազգայնական եւ Ադրբեջանի թրքացմանն ուղղված քայլերի կողմնակից են: Շարժումը հատկապես կոշտ է տրամադրված պանթուրքական հոսանքների դեմ, իսկ ազգային խնդիրներում ընդհանուր առմամբ հանդես է գալիս չափավոր դիրքերից՝ պահանջելով ինքնավարություն Ադրբեջանի կազմում:

Այժմ էլ թալիշաբնակ ռեգիոնը Ադրբեջանում, ըստ տեղական փորձագետների, համարվում է հնարավոր ապակայունացման օջախ, որտեղ հավանական է համարվում «սոցիալ-խմբային հակադրությունների վերածումը էթնիկականի»: Բացի այդ, Ադրբեջանում լուրջ մտավախություն կա այդ ռեգիոնում Իրանի ազդեցության եւ վերջինիս կողմից «բաժանված ժողովրդի» գործոնը օգտագործելու կապակցությամբ:

Ըստ ադրբեջանական աղբյուրների, որոնց պետք է վերապահունով մոտենալ, ներկայումս հավաքական թալիշաբնակ շրջանների հանրակրթական դպրոցներում կան թալիշերենի ժամեր, իսկ Լենքորանում՝ նույնիսկ ռադիոժամ: Հրատարակվում են թերթ, ամսագիր, կա թատրոն, Բաքվում գործում են մշակութային մի քանի կենտրոններ: Ընդհանուր առմամբ Ադրբեջանի թալիշների մոտ ներկայումս կա ադրբեջանաթալիշական երկլեզվություն: Վերջինս հիմնականում կիրառվում է կենցաղում, նաեւ հասարակական ոլորտներում:

Ադրբեջանում թալիշական շարժման հեռանկարները գնահատելու առումով խիստ կարեւոր է այն դիտարկել այդ երկրում վերնախավերի ձեւավորման եւ իշխանության բաժանման համատեքստում: Ըստ փորձագիտական վերլուծությունների, ազգային-պետական ավանդույթներ չունեցող Ադրբեջանում, որտեղ բացակայում է նաեւ ընդհանրական ազգային ինքնության գիտակցությունը, իշխանությունը ձեւավորվում եւ բաժանվում է վարչատարածքային կլանների միջոցով՝ «նախիջեւանյան», «ապշերոնյան», «լենքորանյան», եւ պետական կենտրոնական համակարգի թուլացումն ու կազմալուծումը կարող են հանգեցնել հանրապետության տրոհմանը մի քանի ռեգիոնների, ինչպես եղավ 1990-ական թթ. սկզբին:

Ինչպես արդեն նշվեց, թալիշների մի մասն էլ, մոտ կես միլիոն, բնակվում է Իրանում, հիմնականում Թալիշի շրջանում: Այստեղ նրանց հիմնական բնակավայրերն են՝ Աստարա, Վիզնե, Խավիզ, Լիսար,

Ջողանդան, Խաչտոնար, Ասալեմ, Ռեզվանշահ, Շանդերման, Մասալ, Սոմեյ Սարա, Մասուլե, Ֆունան: Այս տարածքներում թալիշները բնակվում են թե՛ հավաքականորեն, թե՛ գիլյանցիների ու թրքալեզու զանգվածի հետ խառը: Վերջին տարիներին Իրանը թալիշների նկատմամբ հետաքրքիր դիրքորոշում է որդեգրել: Այստեղ բնակվող թալիշների լեզվի, մշակույթի պահպանումը խրախուսվում է պետության կողմից: Դրանով, ըստ էության, խնդիր կա՝ ա) ուժեղացնել իրանական տարրը ավանդաբար թրքալեզու դիմագիծ ունեցող Յյուսիսային Իրանում, բ) լրացուցիչ ազդակներ հաղորդելով ինքնության պահպանմանը՝ ակտիվացնել թալիշական գործունը նաեւ Ադրբեջանում, թերեւս ապագայում նպատակ ունենալով օգտագործել «բաժանված ժողովրդի» գործունը կամ էլ ճնշման լրացուցիչ լծակ ձեռք բերել Ադրբեջանի նկատմամբ:

**ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ  
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ  
Կարեն Վերանյան**

Վրաստանում ռուսաստանյան կապիտալի ներթափանցումն առավել ակտիվ բնույթ ստացավ 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո, երբ Սահակաշվիլու վարած կոշտ քաղաքականությունը հանգեցրեց ռուս-վրացական հարաբերությունների սրմանը՝ ուղեկցվելով ժամանակ առ ժամանակ ծագող դիվանագիտական ու քաղաքական փակուղիներով: Ստեղծված իրադրությունում ռուսական կողմի համար առավել նշանակություն ձեռք բերեց հարավկովկասյան այս հանրապետությունում տնտեսական քաղաքականության ակտիվացումը: 2004թ. հունիսին Վրաստանի կառավարությունում իրականացված տնտեսական վերափոխումների արդյունքում՝ միավորված էկոնոմիկայի եւ ենթակառուցվածքների նախարարությունների ղեկավարումը վստահվեց ռուսաստանյան օլիգարխ Կախա Բենդուկիձեին:

2004թ. հունիսին Բենդուկիձեն ներկայացրեց 2004-2006թթ. սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ցուցակը: Ընդհանուր առմամբ, մինչեւ 2007թ. նախատեսվում էր սեփականաշնորհել շուրջ 372 օբյեկտ, որի արդյունքում 2005-2006թթ. երկրի պետություն էր մուտքագրվելու ընդհանուր առմամբ \$500-550 մլն: Չնայած Բենդուկիձեի այն հայտարարությանը, թե «նշանակություն չունի ով է գնելու ձեռնարկությունները՝ ռուս, ամերիկացի կամ այլ գործարարներ, գլխավորն այդ օբյեկտների սեփականաշնորհումից հնարավորինս մեծ գումարներ ձեռք բերելն է», այնուհանդերձ, երկրում ընթացող սեփականաշնորհման գործընթացում առավել ակտիվ ու շահագրգիռ են ռուսաստանյան ընկերությունները:

Այսպես, 2005թ. հունվարի 18-ին ռուսաստանյան «Евразия холдинг» ընկերությունը հայտարարվեց մանգանի հանքեր վերամշակող «Чиа-турмангануми» բաժնետիրական ընկերության պետական բաժնեմասի եւ էլեկտրաէներգիա ապահովող «ВарციხეГЭС» ձեռնարկության աճուրդի հաղթող՝ առաջ անցնելով այնպիսի ընկերություններից, ինչպիսիք են ուկրաինական «Интерпайп»-ը, բրիտանական «Moralia Georgia»-ն, ավստրիական «Декометал»-ը: Ռուսաստանյան ընկերությունը բաժնետոմսերի փաթեթի համար առաջարկեց \$132 մլն: Ըստ վրացական ընդդիմության, այդ ընկերության հիմնադիրներից մեկը ՌԴ Անվտանգության դաշնային բյուրոյի գեներալ, ազգությամբ արբազ Թենգիզ

Արշբան է: 2005թ. հունվարի 18-ին Թբիլիսիում կայացավ ռուսաստանյան «Внешторгбанк»-ի կողմից Վրաստանի «Объединенный грузинский банк»-ի (վերջինս եկամուտների ծավալով Վրաստանում 4-րդ բանկն է) բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի (50%) ձեռքբերման գործարքը: Իսկ ռուսաստանյան «Dema Computers Limited» ընկերությունն իր հերթին ձեռք բերեց պետության սեփականություն հանդիսացող էլեկտրաքարշաշինարարական «Элмавалмшенебели» գործարանի 51% բաժնետոմսերի փաթեթը: Իսկ նախորդ տարվա աշնանը «Тбिलाвиастрой» ընկերությունը, որոշ տվյալների համաձայն, գնվեց համանուն բաժնետիրական ընկերության կողմից, որն արտադրում է «Սու-25» տեսակի գրոհային ինքնաթիռներ: Ըստ որոշ աղբյուրների, այդ գործարքի հետեւում եւս կանգնած են ռուսաստանյան ընկերությունները:

Վրաստանում սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ցուցակում տեղ գտան նաեւ պետական, ռազմավարական նշանակություն ունեցող ձեռնարկություններ ու գործարաններ, ինչն անուղղակիորեն հակասում է երկրի «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» օրենքին: Այս երեւոյթը տարակարծություններ առաջացրեց երկրի քաղաքական դաշտում եւ բավականին քննադատաբար ընդունվեց հասարակության տարբեր շերտերում: 2005թ. հունվարի վերջին Վրաստանում լեյբորիստների առաջնորդներից Ջոնդի Բագատուրիան մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, թե իշխանությունները կորցրել են չափի զգացումը եւ ելնելով իրենց սեփական առեւտրական շահերից՝ շարունակում են պետական ունեցվածքի հակասահմանադրական ապօրինի սեփականաշնորհումը: Իսկ ընդդիմադիր «Նոր աջեր» կուսակցության առաջնորդ Դավիթ Գամկրելիձեն պահանջեց Վրաստանի նախագահից պաշտոնանկ անել պետնախարար Բենդուկիձեին՝ հիմնավորելով, որ «Վրաստանում սեփականաշնորհման գործընթացն իրականացվում է Բենդուկիձեի եւ քիզնեսի գծով նրա հին ընկերների միջեւ գործարքի հիման վրա»:

Սեփականաշնորհման գործընթացն առավել խնդրահարույց դարձավ, երբ խոսակցություններ սկսեցին պտտվել սեփականաշնորհման ցուցակում այնպիսի ռազմավարական նշանակության օբյեկտների ընդգրկման շուրջ, ինչպիսիք են Բաթումի եւ Փոթիի նավահանգիստները: Չարկ է նշել, որ վերջիններիս գնման հարցում շահագրգռված է ռուսաստանյան «Промышленные инвесторы» ընկերությունը, որն առաջարկում է գործարքի դիմաց վճարել շուրջ \$200 մլն: Ինչպես նշում է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, տնտեսական հարցերով փորձագետ Լադո Պապավան «Civil.ge»-ին տված հարցազրույցում, «եթե ռուսաստանյան ընկերությունները վճարեն նավահանգիստների համար ավելի խոշոր գումարներ, ես չեմ համաձայնի դրա հետ, քանզի Ռուսաստանը Սեւ ծովում ունի

ընդամենը մեկ նավահանգիստ, իսկ Վրաստանում սեփականաշնորհման դեպքում նրա ձեռքում կհայտնվեն նաեւ վրացական նավահանգիստները»:

Պաշտոնական թբիլիսին սկսել է բանակցություններ վարել «Газпром»-ի հետ՝ վերջինիս երկրի հիմնական գազամուղի հավանական վաճառման շուրջ: Գործարքի նկատմամբ իրենց դժգոհությունն արտահայտեցին թե՛ երկրի ընդդիմությունը եւ թե՛ խորհրդարանը: Ընդդիմողներն այն կարծիքին են, որ նախագծի իրականացման հարցում հատկապես շահագրգռված է Բենդուկիձեն: Մասնավորապես, «Նոր աջեր»-ի առաջնորդ Դավիթ Գամկրելիձեի բնորոշմամբ, «Բենդուկիձեին բոլորովին չի հուզում երկրի էներգետիկ անվտանգությունը, նա ամեն կերպ փորձում է առաջ տանել իր ռուս ընկերների շահերը»: «Газпром»-ի հետ այս գործարքին կտրականապես դեմ է արտահայտվել նաեւ իշխանական «Ազգային շարժում» կուսակցության պատգամավորների մի մասը: Վրացի փորձագետների զգալի մասն այն կարծիքին է, որ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ թե՛ երկրի էներգետիկ անվտանգության եւ թե՛ արտաքին քաղաքականության վրա:

Ավելին, գործարքի հավանական իրականացումն անմիջականորեն վերաբերում է Վրաստանում ռուս-ամերիկյան հարաբերություններին: Ակնհայտ է, որ վերոնշյալ գործարքի հավանական իրագործումը կուժեղացնի Վրաստանում ռուսաստանյան տնտեսական ազդեցությունը, ինչն այսօր անմիջականորեն հակադրում է հարավկովկասյան այս հանրապետությունում ԱՄՆ արտաքին քաղաքականությանը: Պատահական չէ, որ մարտի 17-ին թբիլիսիում կայացած նավթի, գազի, էներգետիկայի եւ ենթակառուցվածքների հարցերին նվիրված «GIOGIE-2005» միջազգային համաժողովում Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլսը մասնավորապես նշեց, թե «Միացյալ Նահանգները գտնում է, որ լավ կլինի, եթե Վրաստանը պահպանի այդ գազամուղը, քանի որ դրա վաճառքի դեպքում երկրում կհայտնվի մենիշխանություն»:

Սակայն չպետք է բացառել այն տարբերակը, որ վրաց վերնախավում փորձում են երկու գերտերությունների շահերի համատեքստում առանձին քաղաքական գիծ բանեցնել: Ավելին, ինչպես վերջերս նշեց Բենդուկիձեն, հիմնական գազամուղի հավանական սեփականաշնորհումը մրցակցության դաշտ կստեղծի Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղի նախագծին: Ամեն դեպքում, ռուսաստանյան խոշորագույն «Газпром» ընկերության հետ հավանական գործարքի շուրջ առկա շահարկումներն իսկ դրական չեն անդրադառնում վրաց-ամերիկյան հետագա հարաբերությունների վրա, ավելին՝ թերեւս կխորացնեն Սահակաշվիլու նկատմամբ ԱՄՆ կառավարությունում արդեն նկատելի տարակարծությունները:

Ընդհանրապես, առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, թե Վրաստանի քաղաքական կախվածությունն անցել է Միացյալ Նահանգներին, իսկ երկրի տնտեսական գոտին վերահսկվում է Ռուսաստանի կողմից: Սակայն միայն առաջին հայացքից: Հաշվի առնելով ԱՄՆ հարավկովկասյան քաղաքականությունում Վրաստանի կարեւոր ռազմավարական ու քաղաքական նշանակությունը՝ պաշտոնական Վաշինգտոնը չի համակերպվի այս երկրում Ռուսաստանի տնտեսական գերակայության հաստատման հետ, թեև նկատենք, որ Վրաստանում ռուսական կապիտալի ակտիվացմանը ԱՄՆ կառավարությունը հապաղումով արձագանքեց, այն էլ՝ միայն վերջերս, երբ խոսք գնաց հիմնական գազամուղի հավանական գործարքի վերաբերյալ:

Մյուս կողմից՝ չպետք է բացառել, որ ռուսաստանյան օլիգարխ Բենդուկիձեն, որն ըստ որոշ աղբյուրների, ունի հրեական արմատներ, Վրաստանում տարվող մոսկովյան տնտեսական գծից բացի, միաժամանակ առաջ տանի ոչ ռուսական, ինչու չէ՝ նաեւ հակառուսական տնտեսական քաղաքականություն: Ստեղծվում է մի պատկեր, որտեղ գործ ունենք Վրաստանում ռուսաստանյան տնտեսական լծակների ամրապնդման քաղաքականության հետ, որն, ըստ էության, այդքան էլ ռուսական չէ:

Որպես ամփոփում վերն ասվածի՝ հավելենք, որ Վրաստանում տարվող սեփականաշնորհման գործընթացից, ըստ էության, շահողի դերում չէ վրացական պետությունը: Իշխանությունների վարած արտաքին ու ներքին քաղաքականության արդյունքում նախ ուժեղանում է Վրաստանի կախվածությունը գերտերություններից, երկրորդ՝ թուլանում է վրաց ժողովրդի վստահությունը երկրի ղեկավարների նկատմամբ, եւ երրորդ՝ հող է նախապատրաստվում Վրաստանում հակաիշխանական ալիքի տարածման համար:

## **ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱՄՆ ՄԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ Փագիկ Տեր-Չարությունյան**

Միջազգային ոլորտում ԱՄՆ ներկայիս գերակայությունը գրեթե կասկած չի հարուցում: Ամերիկյան գլոբալ ազդեցության չափի գնահատումը խիստ հրատապ է դարձել նաև ՀՀ-ի համար՝ հաշվի առնելով ինչպես ԼՂՀ խնդրի հետ կապված ԱՄՆ ծրագրերը, այնպես էլ վերջին շրջանում ԱՄՆ քաղաքական առաջխաղացումը ԱՊՀ տարածքում՝ բազմազույն հեղափոխությունների, իսկ ավելի ճշգրիտ՝ հեղաշրջումների իրականացման միջոցով. համարվում է, որ այդպիսով ամերիկացի քաղտեխնոլոգները գտել են այն «ոսկե բանաձևը», որով կարելի է հասնել հաջողության իրենց մրցակիցների նկատմամբ եւ գրավել նոր «գաղափարախոսական տարածքներ»:

Այդ ամենին զուգահեռ, առկա են նաև այլ միտումներ, որոնք հաշվի չառնելը թերի կդարձնի մեր պատկերացումները ներկայիս քաղաքական իրավիճակի վերաբերյալ:

\* \* \*

Հայտնի է, որ քաղաքականությունը դիմամիկ կատեգորիա է, եւ առայժմ պատմությունը հավերժ կայսրությունների օրինակ չունի: Սա, անշուշտ, վերաբերում է նաև ԱՄՆ-ին: Եթե փորձենք ի մի բերել 2001թ. սեպտեմբերի 11-ին հետեւած ժամանակահատվածի զարգացումները, ապա կարող ենք համոզվել, որ Վաշինգտոնի համաշխարհային մենատիրության անթաքույց ձգտումը ձեւավորել է դիմադրության կենտրոններ ողջ աշխարհով մեկ: Կարելի է ասել, որ հակաամերիկանիզմը վերածվել է մի յուրօրինակ սինդրոմի եւ դարձել պաշտոնական քաղաքականություն ոչ միայն Եվրասիայում, այլ նաև Հարավային Ամերիկայում եւ անգամ Կանադայում: Վերջինս, չնայած համարվում է հիմնականում անգլիախոս երկիր, հետեւողականորեն տարանջատում է իրեն ԱՄՆ գլոբալ քաղաքականությունից (օրինակ՝ Իրաքի հարցում), իսկ վերջերս հրաժարվեց անդամակցել ամերիկյան հակահրթիռային համակարգին: Բնորոշ է նաև, որ Բուշի վերընտրումից հետո բազմաթիվ ամերիկացիներ, ի նշան բողոքի, լքեցին Ամերիկան եւ տեղափոխվեցին Կանադա: Նաև զարմանալի չէ, որ այսօր ամերիկյան ՋԼՄ-ում հաճախ են հանդիպում քննադատական նյութեր՝ ուղղված հյուսիսային հարեւանին:

Սակայն փորձենք համակարգված ներկայացնել «հակաամերիկյան շարժումը» եւ գնահատել այդ շարժման հեռանկարները: Հայտնի է, որ իրաքյան պատերազմը հանգեցրեց Բեռլին–Փարիզ–Մոսկվա–Պեկին առանցքով հարաբերությունների ջերմացմանը: Անշուշտ, այդ երկրների միջեւ գոյություն ունեն հակասություններ, սակայն պետք է ամրագրել նաեւ այն փաստը, որ ամերիկյան սպառնալիքները ստիպում են նրանց ամրապնդել միմյանց հետ կապերը: Այս առիթով, թերեւս, տեղին է հիշել ամերիկյան աշխարհաքաղաքագետ Հոմեր Լիի դեռ մեկ դար առաջ ասված խոսքերը, թե «անգլոսաքսոնյան քաղաքականությունը կկնքի իր մահկանացուն այն օրը, երբ միավորվեն գերմանացիները, ռուսները եւ ճապոնացիները»: Նկատենք, որ այդ առումով ճապոնիայի դերը ներկայումս կատարում է Չինաստանը:

Բեռլին–Փարիզ–Մոսկվա–Պեկին հարաբերությունների բովանդակությունը հակիրճ կարելի է ներկայացնել հետեւյալ կերպ.

❖ Պատմական այս վերջին ժամանակահատվածում *Բեռլին–Փարիզ* համագործակցության աննախադեպ սերտացումը հեղափոխական նշանակություն ունեցավ Եվրոպայի համար: Առանց չափազանցության կարելի է փաստել, որ այդ երկու երկրների համաձայնեցված դիրքորոշումները հիմք հանդիսացան Եվրամիության իրական ձեւավորման համար: Անշուշտ, ներկայիս ԵՄ-ը, որպես ամբողջական պետական միավոր, դեռեւս լիովին կայացած չէ եւ ունի մի շարք չլուծված հիմնախնդիրներ, սակայն Ֆրանսիայի եւ Գերմանիայի ներուժի վրա հիմնված ԵՄ-ն այսօր տնտեսական եւ մարդկային ռեսուրսներով արդեն գերազանցում է ԱՄՆ-ին: Կանխատեսում են, որ մոտ ապագայում ԵՄ-ն ունի բոլոր հնարավորությունները մնացյալ ոլորտներում եւս (խոսքը հիմնականում ռազմական եւ ինովացիոն ոլորտների մասին է) հավասար դիմակայելու ԱՄՆ-ին:

❖ *Բեռլին–Մոսկվա* հարաբերությունների սերտացումը կարելուրագույն դերակատարում ունեցավ Ռուսաստանի տնտեսության վերականգնման գործընթացում: Հատկապես հարկ է նշել, որ Ռուսաստանի նոր նավթագազային միավորման համար պահանջվող ֆինանսավորումը տրամադրել են գերմանական բանկերը: Սա հիմք է տալիս մտածելու, որ Ռուսաստանի ընդհանուր տնտեսական քաղաքականության մշակման հարցերում գերմանացիները (որոնք Ռուսաստանի թիվ մեկ տնտեսական գործընկերն են) պետք է որ լուրջ աջակցություն ցուցաբերեն ռուսներին: Նկատենք, որ նման վարկածի ընդունման պարագայում իր տրամաբանական բացատրությունն է ստանում նաեւ Եվրոպական կառույցներում աշխատած Ֆրանկովի վարչապետ նշանակվելը: Պուտինի «գերմանոֆիլությունը» թույլ է տալիս մտածել, որ ինչպես նախորդ դարի 30-ական

թվականներին ԽՍՀՄ-ն ու Գերմանիան փակ ռեժիմով համագործակցում էին, այնպես էլ այսօր այդ երկրների միջև գործում են մի շարք ռազմավարական բնույթի փակ համաձայնություններ:

❖ *Փարիզ–Մոսկվա* համագործակցությունը նույնպես ունի իր պատմական ավանդույթները: Ներկայումս հատկապես արագ են զարգանում այդ երկրների հարաբերությունները ռազմական ոլորտում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ռուսաստան-Ֆրանսիա ռազմածովային ուժերի համատեղ զինավարժությունները, քանի որ միայն այդ երկու երկրներն ունեն ավիակիրներ եւ կարող են այս կամ այն չափով դիմակայել ԱՄՆ-ին եւ Մեծ Բրիտանիային զոնե եվրոպական ծովերում: Հարկ է նշել նաեւ օդային կործանիչների եւ այլ ավիատիեզերական սարքերի ռուս-ֆրանսիական համատեղ մշակումները: Հատկանշական է, որ վերջերս Փարիզ այցելած Պուտինը եղավ Ֆրանսիայի օդային ուժերի կառավարման գերագլուխի կենտրոնում, ուր ցայսօր չէր այցելել մեկ այլ երկրի ղեկավար:

❖ *Մոսկվա–Պեկին* հարաբերությունները զարգանում են թե՛ քաղաքական ոլորտում (Շանհայի կազմակերպության շրջանակներում), թե՛ Չինաստանին սպառնալիցություն մատակարարելու ուղղությամբ: Ռուս-չինական սպասվելիք զինավարժությունները նոր էջ կբացեն երկու երկրների հարաբերություններում: Տնտեսական հարթությունում կարելի էր են Ռուսաստանից Չինաստան ներկրվող էներգակիրների վերաբերյալ համաձայնությունները:

❖ *ԵՄ–Չինաստան*. այս տարի, չնայած վերջերս ստեղծված բարդություններին, ամենայն հավանականությամբ կվերսկսվի եվրոպական սպառնալիցության վաճառքը Չինաստանին: 1989թ. հունիսի 27-ին Պեկինի Տյանանմեն հրապարակում ուսանողների ցույցի ճնշումից հետո ԱՄՆ-ը, ճապոնիան եւ ԵՄ-ն էմբարգո էին դրել Պեկինին զենք մատակարարելու վրա: Սակայն 2005-ին եվրոպացիները որոշեցին էմբարգոն վերացնել, ինչը հարուցել է Վաշինգտոնի անթաքույց դժգոհությունը: Ավելին, այդ առիթով ԱՄՆ-ը սահմանափակումներ է մտցնում եվրոպական երկրներին բարձր տեխնոլոգիաներ մատակարարելու հարցում: ԵՄ–Չինաստան զարգացող կապերի համատեքստում անհրաժեշտ է նաեւ հիշատակել, որ Չինաստանն իր ակտիվ արտահանման քաղաքականությամբ եւ յուրանի արհեստական ցածր փոխարժեքի պահպանմամբ զգալիորեն նպաստում է ԱՄՆ արտաքին ապրանքաշրջանառության դեֆիցիտի գոյացմանը: Այսպիսով Չինաստանը նպաստում է տարադրամային «երկբեւեռության» հաստատմանը. այն իր տարադրամային ռեզերվները հետևողականորեն փոխարինում է դոլարից եվրո: Օրինակ, եթե 2001թ. դոլարով էր Չինաստանի ռեզերվների 83%-ը, ապա այսօր այդ ցուցանիշը

68% է եւ շարունակում է նվազել: (Չարկ է նշել, որ դուրսից եվրոյի անցման միտումը սկսել է համատարած բնույթ կրել, եւ այդ գործընթացն են տանում Ռուսաստանը, Չնդկաստանը եւ այլ երկրներ):

Բացի վերոհիշյալ գործընթացներից, ներկայումս նվազում է ԱՄՆ ազդեցությունը նաեւ եվրոպական՝ նախկինում ամերիկամետ կողմնորոշում ունեցող երկրների վրա: Օրինակ, այսօր Ֆրանսիայի եւ Գերմանիայի եվրակենտրոն եւ հակամերիկյան քաղաքականությանը լիարժեքորեն միացել է Իսպանիան, որը նախկինում համարվում էր անգլո-ամերիկացիների հիմնական դաշնակիցներից մեկը: Նկատենք, որ Իսպանիայի հեռանալը տրանսատլանտյան դաշտից Վաշինգտոնի վերջին տարիների ամենահիվանդագին կորուստն էր: Ավելին. վերջերս տեղի ունեցավ հանդիպում Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի եւ Ռուսաստանի ղեկավարների միջեւ: Սա ռազմավարական մի նոր ձեւաչափ է, որը որակապես փոխում է ուժերի փոխհարաբերությունը եվրոպական աշխարհամասում: Բնորոշ է, որ այդ հանդիպման ընթացքում կարելուվել են Իրաքի եւ Իրանի խնդիրներն ու Ռուսաստան–ԵՄ հարաբերությունների սերտացումը:

Չակամերիկյան տրամադրություններն աճում են նաեւ Իտալիայում: Վարչապետ Բեռլուսկոնին հայտարարեց Իրաքից իտալական զորքերի դուրսբերման մասին եւ չնայած Բուշի հետ հեռախոսազրույցից հետո նրա դիրքորոշումը մի փոքր մեղմվեց, կարելի է համոզված լինել, որ այդ երկիրը հեռանում է ատլանտյան տրամաբանության դաշտից:

Այսպիսով, եթե հետեւենք զարգացումներին, ապա կարող ենք փաստել, որ նվազագույնը Արեւմտյան եւ Չարավային եվրոպան այսօր ունեն բոլոր շանսերը միավորվելու եվրակենտրոն, այսինքն՝ զգալի չափով հակաատլանտյան գաղափարախոսության հիման վրա: Նման միտումը չի կարող վաղ թե ուշ իր ազդեցությունը չունենալ նաեւ Արեւելյան եվրոպայի երկրների (առաջին հերթին՝ Լեհաստանի) ամերիկյան կողմնորոշում ունեցող քաղաքականության վրա:

Ընդգծենք, որ եվրոպական երկրների հակամերիկյան դիրքորոշումը ռեալ ազդեցություն է գործում ԱՄՆ քաղաքականության վրա: Օրինակ, Բուշի եվրոպա կատարած անհաջող այցից հետո, երբ նրան չհաջողվեց տրամադրել եվրոպացիներին Իրանի դեմ, ԱՄՆ-ը փաստորեն որոշ «փափուկ» քայլեր կատարեց Իրանի հանդեպ: Մասնավորապես, Իրանին առաջարկվեց մտնել Առեւտրի համաշխարհային կազմակերպություն, ինչն իրանական կողմն առայժմ մերժել է:

\* \* \*

Ի լրումն Եվրասիայում ընթացող անբարենպաստ գործընթացների, ամերիկյան ծրագրերը հանդիպում են հարաճող դիմադրության նաեւ այլ տարածաշրջաններում: Այս առումով բնորոշ են Վենեսուելայի ղեկավար Յուգո Չավեսի այցերը Պեկին եւ Մոսկվա: Այդ այցերի արդյունքում չինացիները մոտ \$500 մլն ներդրումներ են կատարել Վենեսուելայում (եւ մոտավորապես նույնքան՝ Կուբայում) եւ, ինչն ամենակարեւորն է, պայմանավորվել են Վենեսուելայից Չինաստան նավթի մատակարարման մասին՝ ԱՄՆ մատակարարվող նավթի հաշվին: Իր հերթին, Մոսկվան որոշում է ընդունել մատակարարել Վենեսուելային Կալաշնիկովի ավտոմատներ (100000 հատ AK-47) եւ մարտական ուղղաթիռներ (40 հատ) ու ՄԻԳ 29 կործանիչներ (50 հատ): Հատկանշական է, որ Իրանի նախագահ Խաթամին վերջերս, իր հերթին, այցելեց Վենեսուելա եւ կնքեց մի շարք պայմանագրեր: Այդպիսով ուրվագծվում է հակամերիկյան համագործակցության մի նոր ձեւաչափ՝ Մոսկվա-Պեկին-Թեհրան-Կարակաս ուղղությամբ: Հատկանշական է, որ Մոսկվայի, Պեկինի եւ Թեհրանի լատինա-ամերիկյան ակտիվությանը հետեւեցին ԵՄ պատվիրակությունների հաճախակի դարձած այցերը դեպի այդ մայրցամաք:

Վերոհիշյալ գործընթացների տակ թաքնված են Լատինական Ամերիկայում մշտապես ընթացող եւ վերջին ժամանակահատվածում նոր թափ առած հակամերիկյան գործընթացները: Հուգո Չավեսը, շարունակելով Ֆիդել Կաստրոյի ավանդույթները (ի դեպ, այդ երկու գործիչները սերտորեն համագործակցում են), դարձել է Լատինական Ամերիկայի նոր հերոսը. նա այցելում է այդ մայրցամաքի երկրները, հանդես է գալիս բազմաիւրազարանոց հանրահավաքներում եւ համախմբման կոչեր անում: Նշենք, որ հակամերիկյան տրամադրությունները սաստկացել են նաեւ Արգենտինայի եւ Բրազիլիայի վերնախավերում (վերջինս իրականացնում է նաեւ իր սեփական միջուկային ծրագիրը):

Ձարգացումները Լատինական Ամերիկայում լրջորեն անհանգստացրել է Բուշի վարչակազմին: Քոնդոլիզա Ռայսը հանդես եկավ համապատասխան հայտարարությունով եւ մեղադրեց լատինաամերիկյան իշխանություններին «սոցիալիստական» միտումների մեջ, իսկ Դոնալդ Ռամսֆելդն այցելեց Բրազիլիա եւ այնտեղից պախարակեց ռուս-վենեսուելական հարաբերությունները:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ամրագրել, որ լատինաամերիկյան մայրցամաքում ընթացող զարգացումներին անմիջական աջակցություն են ցուցաբերում Չինաստանը եւ Ռուսաստանը. առաջինը՝ տնտեսական, երկրորդը՝ ռազմական ոլորտներում: Նման է նրան, որ այդ սխեման

աշխատում է նաև Միջին Արեւելքում: Հայտնի է, որ Չինաստանն այսօր Իրանի գլխավոր տնտեսական գործընկերն է: Իր հերթին, Ռուսաստանը մատակարարում է Իրանին միջուկային եւ հրթիռային տեխնոլոգիաներ: Վերջերս մեծ աղմուկ հանեց նաև ռուսական «Ստրելեց» զենիթային համակարգերի վաճառքը Սիրիային, չնայած այդ գործարքի դեմ կոշտ հանդես եկան ԱՄՆ-ը եւ Իսրայելը: Այսինքն՝ Ռուսաստանը եւ Չինաստանը վարում են հետեւողական քաղաքականություն՝ ուղղված ԱՄՆ մենատիրության դեմ:

*Ամփոփելով վերոհիշյալ դիտարկումները՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ «հակահարեկչական պատերազմի» արդյունքում ԱՄՆ-ը սկսել է կրել ռազմավարական կարգի բազմաթիվ կորուստներ: Կարելի է ենթադրել, որ եթե պահպանվի քաղաքական գործընթացների ներկայիս տրամաբանությունը, ապա գուցե եւ արդարացվեն ականավոր քաղաքագետներ Իմանուել Վալերստայնի (ԱՄՆ) եւ Էմանուել Տոդի (Ֆրանսիա) այն կանխատեսումները, թե մոտակա ապագայում ԱՄՆ-ը կարող է եւ կորցնել միակ գերկայսրության իր ներկայիս կարգավիճակը:*

**ԱՄՆ–ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ  
Դավիթ Հովհաննիսյան**

Վերջին շրջանում մի շարք երկրների հեղինակավոր վերլուծաբաններ եւ քաղաքագետներ նորից սկսել են քննարկել Իրաքի պատերազմի սկզբնական շրջանում հրատապ դարձած մի հիմնահարց, որը կապված է Միացյալ Նահանգներ–Եվրոպական Միություն (մասնավորապես նաեւ ԱՄՆ–Ֆրանսիա, ԱՄՆ–Գերմանիա) հարաբերությունների հետ: Այս համատեքստում են դիտվում նաեւ Միացյալ Նահանգներ–Թուրքիա հարաբերությունները, հատկապես այն բանից հետո, երբ մի շարք ամերիկյան հրապարակումներում հասարակության ուշադրությունը հրավիրվեց Թուրքիայում հակամերիկյան կատաղի քարոզչության վրա, որում ներգրավված են նաեւ իշխող իսլամիստական կուսակցության լրատվամիջոցները:

Վերլուծաբանների մի մասը գտնում է, որ Եվրոպայի համար Միացյալ Նահանգների հետ հարաբերություններն այնքան կարեւոր են, որ Եվրոպացիները կարող են անտեսել նեոպահպանողականների կողմից ձեւավորված ամերիկյան քաղաքականության երրորդ սկզբունքը, որն այսպես է հնչում՝ «ռազմավարական առաջատարություն Եվրոպայում»: Մյուսները պնդում են, որ Եվրոպան այլեւս չի կարող հանդուրժել Ամերիկայի՝ միջազգային կարգի կոպիտ խախտումները եւ կոմբոյական վարվելակերպը:

Առաջադրված հարցի պատասխանն ունի սկզբունքային նշանակություն, որի արժեքն իր կարեւորությամբ մոտավորապես հավասար է Միացյալ Նահանգներ–Չինաստան հարաբերությունների հեռանկարների կանխագուշակմանը:

Իր երկրորդ նախագահական շրջանը Ջորջ Բուշը սկսեց Եվրամիության մեջ մտնող առաջատար պետությունների հետ Միացյալ Նահանգների հարաբերությունները կարգավորելու ակտիվ դրսեւորումներով: Սույն թվի փետրվարին Եվրոպա կատարած իր ուղեւորության ընթացքում նախագահ Ջ.Բուշն օգտագործեց բոլոր հնարավոր առիթները՝ Միացյալ Նահանգների եւ Եվրամիության երկրների հարաբերությունների կարեւորությունը շեշտելու համար: Նա հատուկ նշեց մի քանի ոլորտներ, որտեղ ամերիկա-եվրոպական գործընկերությունը, իր տեսակետից, հատուկ նշանակություն ունի: Դրանք են՝ Միջին Արեւելքում բարեփոխումների գործընթացի խրախուսումը, իսրայելա-պաղեստինյան խաղաղ գործըն-

թացին օժանդակությունը, միասնական կեցվածքը Իրանի միջուկային ծրագրերի նկատմամբ եւ Իրաքում՝ կայունացման ու ժողովրդավարացման միտումների ուժեղացմանն ուղղված ջանքերի ներդրումը:

Ինչպես նշել է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռոբերտ Ջելիքը, Միացյալ Նահանգների նախագահը եվրոպական մայրաքաղաքներում ունեցած իր հանդիպումների ժամանակ նշել է, որ ամերիկացիները եւ եվրոպացիները ցանկություն ունեն համագործակցելու Իրաքի վերականգնմանն ուղղված աշխատանքների հաջորդ փուլում, մասնավորապես՝ «էլեկտրամատակարարման, իրավական համակարգի ստեղծման, քաղաքական իշխանության որոշակի ապակենտրոնացման ոլորտներում, օժանդակելով զբաղվածությանը նպաստող տնտեսական միջավայրի ստեղծմանը»:

Հասկանալի է նախագահ Բուշի ձգտումը՝ մեղմել այն հակասությունները, որոնք եվրոպայի եւ Ամերիկայի միջեւ առկա էին վաղուց, սակայն բացահայտորեն դրսևորվեցին միայն Իրաքի շուրջ ծավալված դեպքերի կապակցությամբ: Պարզ չէ միայն, թե որքանով նրան կհաջողվի իրականացնել այդ նպատակը, քանի որ հարցը շատ ավելի գլոբալ բնույթ ունի եւ կապված է աշխարհակարգի էության հետ:

Սառը պատերազմից հետո, չունենալով իր դեմ այնպիսի ակնախնայան, ինչպիսին էր Խորհրդային Միությունը, Միացյալ Նահանգները սկսեց վարել միանձնյա առաջատարի քաղաքականություն, որն ընդունված է բնութագրել որպես «միաբեւեռ» աշխարհակարգ: Նոր պայմաններում ամերիկացի նեոկոնները ՆԱՏՕ-ն եւ ԵՄ-ն սկսեցին դիտարկել որպես խոչընդոտ՝ եվրոպական տարածաշրջանում ամերիկյան գերիշխանության հաստատման համար: Երբ արդեն գոյություն չունեն Խորհրդային Միությունից բխող վտանգը, ի հայտ եկավ նոր հիմնահարց՝ արագորեն սրվող տնտեսական մրցակցության պայմաններում մրցունակ լինելը, ինչը, նախեւառաջ, կապված է ածխաջրածնային վառելանյութի համաշխարհային պաշարներից առավելագույնս օգտվելու հնարավորության հետ:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ, համաձայն ՕՊԵԿ-ի տվյալների, այս չվերականգնվող վառելանյութի պահանջարկը մոտակա տասը տարիների ընթացքում աճելու է 2-3 անգամ, ինչն, իր հերթին, նշանակում է, որ բոլոր նախկին հաշվարկները, համաձայն որոնց նավթի եւ գազի պաշարները դեռ մոտավորապես հարյուր տարի կբավարարեն զարգացող տնտեսության պահանջները, սխալ էին:

Սա, իր հերթին, նշանակում է, որ դինամիկ եւ առանց ճգնաժամերի զարգացման համար անհրաժեշտ է բավարար չափով վերահսկել վառելանյութի արտադրությունը եւ տեղափոխումն ապահովող ենթակառուց-

վածքները: Եվրամիությունը, քաջ գիտակցելով մոտ ապագայի էներգետիկ մարտահրավերները, նույնքան հստակ պատկերացնում է, թե ինչպիսի հզոր ուժի հետ է բախվում այս խնդրի լուծմանն ուղղված իր նպատակներին հասնելու ճանապարհին:

Սակայն, ԱՄՆ եւ ԵՄ հակասությունները միայն տնտեսական առանցքային շահերի բախումով չեն պայմանավորված:

Սառը պատերազմի ավարտից հետո աստիճանաբար ավելի ու ավելի պարզ է դառնում, որ այս երկու աշխարհների տարբերությունները խորքային են եւ պատկանում են արժեքների ոլորտին, ինչը չափազանց դժվար է դարձնում հարաբերություններում դրսևւորվող հակասությունների մեղմացումը: Տարբեր են ամերիկյան եւ եվրոպական մոտեցումները ժողովրդավարությանը, ազատականությանը, կրոնին, մարդու իրավունքներին, հասարակության, պետության եւ անձի հարաբերությունների կարգավորման մեխանիզմներին: Տարբեր են նրանց պատկերացումները հետսառըպատերազմական աշխարհակարգի մասին: Աֆղանստանի, Իրաքի, իսկ դրանից առաջ՝ նաեւ Հարավսլավիայի հետ կապված իրադարձությունները եվրոպացիների առջեւ մի չափազանց սկզբունքային հարց դրեցին. պե՞տք է, արդյոք, նրանք մնան ԱՄՆ-ին հավատարիմ դաշնակիցներ, թե՞ իրենց պատկերացումներից եւ շահերից բխում է միջազգային օրենքի եւ, ընդհանրապես, ձեւավորված աշխարհակարգի պաշտպանումը:

Երկրորդ հարցը կապված է ՄԱԿ իրավասությունների եւ լիազորությունների հետ, որոնք ամբողջովին անտեսվեցին Միացյալ Նահանգների կողմից Իրաքի վրա հարձակում կազմակերպելիս: Այն բանից հետո, երբ ԱՄՆ կառավարությունը ստիպված եղավ հաստատել, որ ամերիկյան հետախուզությունը «սխալվել» է՝ պնդելով, թե Իրաքում կա զանգվածային ոչնչացման զենք, Իրաքի դեմ ծավալված պատերազմը եւ Սադամ Հուսեյնի պաշտոնանկ անելը՝ միջազգային օրենքի տեսակետից բացարձակ ապօրինի գործողություններ են:

Այս ամենը եվրոպական մայրաքաղաքներում քաջ գիտակցվում էր դեռեւս այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները փորձում էր լայն կոալիցիա ձեւավորել Իրաքի դեմ: Այստեղից էլ Վաշինգտոնի անթաքույց կատաղությունը, որն արտահայտվեց հայտնի բանաձեւով. «Շիրակին՝ պատժել, Շրյոդերին՝ անտեսել, Բլերին՝ պարգևատրել»:

Սակայն հատկապես Թուրքիայի կեցվածքն էր, որ սկզբից առաջացրեց Միացյալ Նահանգների անկեղծ զարմանքը, որը հետագայում փոխվեց անզուսպ ցասումի: Թուրքիայի անհնազանդությունը եւ, Միացյալ Նահանգների տեսակետից՝ անհասկանալի հավակնություններն առաջացրին երկկողմանի լուրջ լարվածություն, որը ներկայումս ավելի է

թեժացել: Սա՝ այն դեպքում, երբ Վաշինգտոնին անհրաժեշտ է բացարձակ հավատարիմ դաշնակից՝ Միջին Արեւելքում իր ծավալած գործողությունների իրականացման հիմնական խարիսխ դառնալու համար:

Եթե թուրք-ամերիկյան հարաբերությունները դիտարկենք Անկարայի՝ Եվրամիության անդամ դառնալու համատեքստում, ապա կարելի է եզրակացնել, որ ներկայիս թուրքական իշխանությունները ոչ միայն փորձում են օգտագործել ամերիկա-եվրոպական հակասությունները, այլև իրենց հույսերը կապել են եվրոպական քաղաքականության հետ, որի անբաժան մասն են իրենց համարել դեռ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում (սկսած 17-րդ դարի երկրորդ կեսից), եւ ուր վերադառնալը նրանց կարելուագույն խնդիրներից է:

Հատկապես թուրքերը վերջին տարիներին անընդհատ վերլուծում են երկու հսկաների՝ Միացյալ Նահանգների եւ Եվրոպական Միության հնարավորությունները եւ հզորությունները: Թվերը հետեւյալն են. 300 մլն ամերիկացի եւ 450 մլն եվրոպացի՝ համապատասխանաբար \$12280 մլրդ եւ \$13700 մլրդ ՀՆԱ-ով:

1990 եւ 2001թթ. միջեւ ընկած ժամանակահատվածում ԱՄՆ տնտեսությունն աճել է 27%-ով, իսկ եվրոպականը՝ 15%-ով: Եվրոպայի բոլոր երկրների համար էլ գործազրկությունը լուրջ հիմնահարց է՝ այն դեպքում, երբ Ամերիկայում այն աննախադեպ ցածր է՝ 4%:

Միացյալ Նահանգների հետազոտություններին եւ զարգացման ծրագրերին ուղղված ծախսերը ռազմական ոլորտում կազմում են \$46 մլրդ, քաղաքացիական ոլորտում՝ \$37 մլրդ, իսկ ԵՄ-ինը, համապատասխանաբար՝ \$12 մլրդ եւ \$49 մլրդ:

Ռազմական ոլորտում ԱՄՆ հզորությունն ավելին է, քան ՆԱՏՕ-ի նրա բոլոր դաշնակիցներինը միասին վերցրած:

Միեւնույն ժամանակ առետրական ոլորտում Եվրոպան անառարկելի առաջատար է: Այն արտահանում է տարեկան \$2450 մլրդ ապրանք, իսկ ներմուծում՝ \$2447 մլրդ: Միացյալ Նահանգները արտահանում է \$694 մլրդ ապրանք, իսկ ներմուծում՝ \$1202 մլրդ:

Եվրոպան արտահանում է Միացյալ Նահանգներ \$232 մլրդ արտադրանք, իսկ Միացյալ Նահանգներն արտահանում է ԵՄ երկրներ ընդամենը \$144 մլրդ արտադրանք:

Հաշվի առնելով ծավալվող մրցակցությունը էներգակիրների եւ դրանց տեղափոխման ենթակառուցվածքների շուրջ՝ կարելի է ասել, որ հարաբերությունները կարգավորելու եւ հակասությունները մեղմելու ուղղությամբ նախագահ Բուշի ջանքերը կունենան ժամանակավոր եւ մասնակի հաջողություն: Տեսանելի ապագայում հարաբերություններն այս երկու հսկաների միջեւ այլեւս չեն կարող լինել դաշնակցային, բացառությամբ

այն իրավիճակի, երբ որեւէ երրորդ ուժ դառնա ավելի սպառնալի, քան այս երկուսն իրար նկատմամբ: Չնարավոր է, որ նման երրորդ ուժ դառնա Չինաստանը, ինչը, մեր տեսակետից, ներկայումս անհավանական է, հաշվի առնելով չինական քաղաքականության կարելորագույն սկզբունքը՝ չկնքել դաշինքներ եւ չթշնամանալ արտաքին աշխարհի հետ (նախահարձակ չլինել):

Ներկայիս իրավիճակում կարելի է ենթադրել, որ նման ուժ կարող էր դառնալ իսլամական աշխարհը, եւ այդպիսի կարծիքներ արտահայտվում են, սակայն, նախ՝ միասնական իսլամական աշխարհ գոյություն չունի, երկրորդ՝ այն դեռեւս չափից դուրս թույլ է, որպեսզի կարողանա լուրջ մրցակցության մեջ մտնել հիմնական խաղացողների հետ:

## **ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Արտակ Շաքարյան**

Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր՝ մոտ 50 տարի Միացյալ Նահանգները եւ Թուրքիան ունեին սերտ հարաբերություններ, որը կարելի էր բնորոշել իբրեւ «ռազմավարական գործընկերություն»:

Սակայն աշխարհաքաղաքական նոր վերադասավորումը, բնականաբար, իր ազդեցությունը թողեց նաեւ այս երկու տերությունների հարաբերությունների վրա: Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան կարծես կորցրեց իր նախկին կարեւորությունն Արեւմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար. Անկարան այլեւս առճակատման սահմանագծում չէր:

2001թ. սեպտեմբերի 11-ը շրջադարձային էր միջազգային հարաբերություններում: Արեւմտյան աշխարհի եւ հատկապես ԱՄՆ-ի համար թիվ մեկ թշնամու կերպարը ձեռք բերեց «կանաչ ահաբեկչությունը»: ԱՄՆ-ն ընտրեց բազմաչափ պատերազմի տարբերակը, իսկ Թուրքիան կրկին հայտնվեց իրադարձությունների կենտրոնում:

Իրաքյան պատերազմը փորձաքար հանդիսացավ թուրք-ամերիկյան հարաբերություններում: Պատերազմի նախօրեին հիմնական հարցը վերաբերում էր Թուրքիայի տարածքով Ջյուսիսային Իրաք ամերիկյան զինուժ մտցնելուն: Ինչպես հայտնի է, 2003թ. մարտի 1-ի քվեարկությամբ Թուրքիայի խորհրդարանը 62 հազար ամերիկյան զինվոր Թուրքիայում տեղակայելու ու թուրք զինվորներին Իրաք ուղարկելու վերաբերյալ օրինագիծը մերժեց: Ուշագրավն այն է, որ իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) մոտ 100 պատգամավորներ դեմ էին քվեարկել այդ օրինագծին:

Թուրքական խորհրդարանի մերժման հիմքում առկա էին մի քանի պատճառներ: Անշուշտ, իր դերն ունեցավ թուրքական հասարակության կարծիքը: Ըստ տարբեր հաշվարկների, Թուրքիայի բնակչության մոտ 80-90%-ը դեմ էր ԱՄՆ-ի Իրաք ներխուժմանը, որն էլ իր որոշակի ազդեցությունը թողեց իսլամամետ ԱԶԿ ղեկավարության վրա: Երկրորդ կարեւոր պատճառը Վաշինգտոնի կողմից Անկարային հատկացվելիք (որպես փոխհատուցում իրաքյան պատերազմի հետեւանքով թուրքական կողմի կրելիք հավանական վնասների) ֆինանսատնտեսական օժանդակության շուրջ առկա հակասություններն էին. ամերիկյան կողմը գտնում էր, որ պաշտոնական Անկարան չափից ավելի մեծ գումար է պահանջում:

Սակայն ամենակարեւորը, թերեւս, երրորդ հանգամանքն էր: ԱՄՆ

պաշտպանության փոխնախարար Փոլ Վուլֆովիցը 2003թ. մարտի 1-ի քվեարկության համար մեղադրեց ոչ թե իսլամամետ կառավարությանը, այլ թուրքական զինվորականությանը:

Թեև իրաքյան պատերազմի ժամանակ հարաբերությունները ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ բավական լարված էին (հիշենք ԱԶԿ անդամ մի շարք պատգամավորների դատապարտող հայտարարությունները ԱՄՆ իրաքյան քաղաքականության նկատմամբ, որոնք անգամ հասան ամերիկացիներին ցեղասպանության մեջ մեղադրելու աստիճանին), սակայն նույն այդ ժամանակ նոր բնույթի հարաբերություններ կերտելու փորձ կատարվեց:

2004թ. հունվարին Սպիտակ տանը հյուրընկալվեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Բուշ – Էրդողան քննարկման հիմնական թեմաներն էին Կիպրոսը, Հյուսիսային Իրաքը, Հայաստանի հետ սահմանի խնդիրը, ինչպես նաեւ ամերիկյան «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագիծը: Այդ հանդիպման ժամանակ Էրդողանը հայտնեց իր աջակցությունը ամերիկյան նախագծին: Խոշոր հաշվով Էրդողանի այս այցն էր, որ նոր հարաբերությունների կառուցման սկիզբ հանդիսացավ՝ հիմք դառնալով մեկ տարի հետո Անկարա ԱՄՆ բարձրաստիճան անձանց այցելության համար:

Հաջորդ կարեւոր փուլը սկսվում է ԱՄՆ նախագահ Բուշի վերընտրությամբ: 2005թ. հունվարին Անկարա ժամանեց ԱՄՆ պաշտպանության նախարարի խորհրդական, Պենտագոնի մերձավորարեւելյան քաղաքականության հանգուցային դեմքերից Դուգլաս Ֆեյթը: Նա հանդիպումներ ունեցավ Թուրքիայի վարչապետ Էրդողանի, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Յիդիթ Ալփոզանի եւ այլ բարձրաստիճան անձանց հետ: Ֆեյթի այցին հետեւեց ԱՄՆ արտաքին գործերի նախարար Քոնդոլիզա Ռայսի այցելությունը:

Ռայսի այցը հատկանշական է այն առումով, որ փորձ արվեց պայմանավորվել ավելի կոնկրետ հարցերի շուրջ՝ ըստ ամենայնի, հիմք ընդունելով մեկ տարի առաջ Էրդողանի Վաշինգտոն կատարած այցի ընթացքում ձեռք բերված ընդհանուր փոխհամաձայնությունը: Այդ կոնկրետ հարցերն էին՝ Իրանի միջուկային ծրագիրը, իրավիճակն Իրաքում, քրդական հարցը, Սիրիան, թուրք-իսրայելական հարաբերությունները:

Այսպիսով, թուրք-ամերիկյան հարաբերություններում սկսեցին ի հայտ գալ նոր տրամաբանության նշաններ: Խնդիրն այն է, որ Խորհրդային Միության փլուզմամբ փոխվեց աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանությունը թե՛ Եվրոպայում, թե՛ Մերձավոր Արեւելքում: Այդ պայմաններում հասկանալի է, որ Վաշինգտոնին այլեւս չէր կարող բավարարել Անկարայի նկատմամբ իր նախկին՝ «պարզունակ» ռազմավարությունը, նաեւ այն պատճառով, որ օբյեկտիվորեն փոխվել էին մրցակցող ուժերի ռազմավարությունների ուղղությունները Թուրքիայի հարեւան բոլոր

տարածաշրջաններում՝ Եվրոպա, Մերձավոր Արեւելք եւ հետխորհրդային տարածք: Մյուս կողմից, հաշվի առնելով նոր իրողությունները՝ Անկարան եւս ձգտելու էր նորովի մոտենալ ԱՄՆ-ի հետ իր հարաբերություններին:

Այսօր գոյություն ունեն թուրք-ամերիկյան հարաբերությունների բնութագրման երկու հիմնական մոտեցումներ:

Առաջին մոտեցման հիմքում, ընդհանուր առմամբ, ընկած է թուրքական վերնախավի աշխարհայացքային տրանսֆորմացիայի դրույթը, ինչը, բնականաբար, իր արտացոլումը պետք է գտներ նաեւ թուրք-ամերիկյան հարաբերություններում: Տրանսֆորմացիայի էությունը հետեւյալն է. փաստացի մերժում ստանալով Եվրամիությունից՝ Անկարան իրեն այլեւս չի պատկերացնում զուտ Արեւմտյան աշխարհի մաս, հետեւաբար պետք է այլընտրանք որոնել: Պատահական չէ, որ 2003թ. մարտի 1-ի քվեարկության համար Փոլ Վուլֆովիցը մեղադրեց թուրքական զինվորականությանը՝ այն օղակը, ուր արդեն մի քանի տասնամյակ ընդունվում են պետության համար ամենակարեւոր որոշումները: Այլ կերպ ասած՝ ամերիկյան կողմը գիտակցում էր տեղի ունեցած փոփոխությունը:

Դրա շոշափելի արդյունքը հանդիսացավ այն, որ որոշակի խզում առաջացավ թուրք-ամերիկյան ռազմական համագործակցության մեջ. այն գնալով մեծանում է եւ կարող է եական ազդեցություն թողնել թուրք-ամերիկյան հարաբերությունների ողջ ծավալի վրա: Այդ համատեքստում ուշադրության են արժանի 2003թ. մարտի 1-ի քվեարկության առիթով Վուլֆովիցի խոսքերն այն մասին, թե «Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության հիմքը այսուհետ լինելու է ոչ այնքան ռազմական, որքան տնտեսական ու քաղաքական»:

Երկրորդ տարբերակն ավելի ուշագրավ է: Բացառված չէ, որ հաշվի առնելով նաեւ վերը նշվածը՝ Վաշինգտոնը նախաձեռնել է իր թուրքական դաշնակցի դերակատարության որոշակի փոփոխություն: Թուրքիան պետք է հանդես գա որպես «օրինակելի» իսլամական երկիր, հրաժարվի Աթաթուրքի սահմանած համակարգից եւ ձգտի դեպի Եվրամիություն՝ ապացուցելու համար իսլամի եւ ժողովրդավարության համատեղելի լինելը:

Ներկայումս թուրք-ամերիկյան հարաբերությունների «ձեւափոխման» գործընթացը գերազանցապես կարելի է բացատրել վերը ներկայացված երկու տարբերակներով:

2006-ին Թուրքիայում սպասվում են խորհրդարանական ընտրություններ: Վերը նշվածի համատեքստում շատ կարեւոր է, թե ինչ կերպ կընթանա նախընտրական քարոզարշավը եւ ընտրությունների արդյունքում ինչ դասավորվածություն կստեղծվի խորհրդարանում ու կառավարությունում:

## ԻՐԱՔՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Արաքս Փաշայան*

2005թ. հունվարի 30-ին Իրաքում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, ինչի արդյունքում ձեւավորվեց Իրաքի Ազգային ժողովը: Խորհրդարանում ձայների մեծամասնությունն ստացած շիաները եւ քրդերը նախօրոք համաձայնության եկան պետական պաշտոնների նշանակման հարցում: Ապրիլի 6-ի նիստում Իրաքի Ազգային ժողովն ընտրեց նախագահական խորհրդի կազմը, որին անդամակցում են նախագահը եւ երկու փոխնախագահները: Իրաքի նախագահ ընտրվեց «Քրդստանի հայրենասիրական միության» առաջնորդ Ջալալ Թալաբանին, որի տեղակալներ ընտրվեցին դավանանքով շիա Ադիլ Աբդ ալ-Մահդին եւ սուննի Ղազի ալ-Յավարը:

Իրաքը երբեք քուրդ նախագահ չի ունեցել, չնայած որ քրդերը կազմում են բնակչության 15-20 տոկոսը: Թալաբանին արաբական առաջին երկրի նախագահն է, որը ոչ արաբական՝ քրդական ծագում ունի: Բացի այդ, նա Իրաքում վերջին հիսուն տարում ժողովրդավարական ճանապարհով ընտրված առաջին նախագահն է:

Թալաբանին Իրաքում քրդական շարժման ամենաակնառու գործիչներից է: Ծնվել է 1933թ. Յուսիսային Իրաքում, մասնագիտությամբ իրավաբան է, Բաղդադի համալսարանի շրջանավարտ: 1950-ականներից եղել է «Քրդստանի դեմոկրատական կուսակցության» անդամ, սակայն 1975-ին դուրս գալով կուսակցությունից՝ հիմնել է «Քրդստանի հայրենասիրական միությունը»: 2003թ. Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո Թալաբանին մտավ ամերիկացիների կողմից ստեղծված Իրաքի ժամանակավոր կառավարման խորհրդի մեջ:

Աբդ ալ-Մահդին մասնագիտությամբ տնտեսագետ է, սովորել է Ֆրանսիայում: Այադ Ալավիի կառավարության մեջ զբաղեցրել է ֆինանսների նախարարի պաշտոնը: «Իրաքի իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի» անդամ է:

Ղազի ալ-Յավարը ծագում է արաբական Շուճար ցեղից, որն ամենաազդեցիկներից մեկն է տարածաշրջանում: Ի դեպ, շուճարցիները զգալի աջակցություն են ցուցաբերել 1915թ. Մեծ եղեռնից մազապուրծ շատ հայերի: Ալ-Յավարը նավթային արդյունաբերության եւ մետալուրգիայի ինժեներ է: Սովորել է Սուադյան Արաբիայում եւ ԱՄՆ-ում: Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո, Իրաք վերադառնալով,

դարձել է կառավարման խորհրդի անդամ, իսկ հետո՝ երկրի ժամանակավոր նախագահ:

Իրաքի նախագահական խորհուրդն ապրիլի 7-ին երկրի վարչապետ ընտրեց նախկին փոխնախագահ, շիա Իբրահիմ ալ-Ջաֆարիին, որին հանձնարարվեց ձեւավորել նոր կառավարության կազմը: Իբրահիմ ալ-Ջաֆարին չափավոր իսլամական ադ-Դավա կազմակերպության առաջնորդն է: Իսլամը ալ-Ջաֆարիի պատկերացմամբ, որպես պաշտոնական կրոն՝ պետք է դառնա նոր ձեւավորվող սահմանադրության եւ օրենսդրության աղբյուր:

Իրաքի ժամանակավոր սահմանադրության համաձայն, Իրաքը խորհրդարանական պետություն է, որ փաստացի ղեկավարվելու է վարչապետի կողմից: Սակայն սխալ կլինի կարծել, թե Թալաբանին լծակներ չունի: Նաեւ նրա հովանու ներքո խորհրդարանը պետք է մշակի Իրաքի մշտական սահմանադրությունը: Թալաբանին բավական ազդեցիկ քաղաքական գործիչ է ոչ միայն քրդական շրջանակներում, եւ նրա նախագահության օրոք Իրաքի Ազգային ժողովում քրդական դաշինքը, բնակավայր, փորձելու է քրդական հարցին ավելի շահեկան լուծումներ տալ:

Իրաքյան քրդերը ձգտում են դաշնային, դեմոկրատական եւ աշխարհիկ պետության շրջանակներում՝ հասնել տարածքային ինքնակառավարման առավելագույն լիազորությունների ձեռքբերմանը: Նրանք պահանջում են հստակ տարանջատում անցկացնել ինքնավար Քրդստանի եւ կենտրոնական իշխանության միջեւ: Քրդերը ձգտում են վերջնականորեն որոշել ինքնավարության սահմանները եւ դրան միացնել Քիրքուկը: 2005թ. հունվարի 30-ին Թաամիմ նահանգում, որի կենտրոնը Քիրքուկն է, անցկացվել են տեղական ինքնակառավարման ընտրություններ, որոնց արդյունքում քրդերը հավաքել են 26, արաբները՝ 6, թուրքմենները՝ 9 ձայն: Արաբները հայտարարել են, թե չեն մասնակցի խորհրդի աշխատանքներին, քանի դեռ քրդերը համաձայն չեն, որպեսզի էթնոդավանական խմբերի միջեւ պարտավորությունները հավասարաչափ բաշխվեն: Քրդերը համաձայն են, որպեսզի արաբները ստանձնեն նահանգի կառավարումը՝ պայմանով, որ այն միանա քրդական ինքնավարությանը: Արեւմտյան վերլուծաբանների կարծիքով՝ Քիրքուկում էթնոդավանական խմբերից որեւէ մեկը բնակչության մեծամասնություն չէ:

Իսկ մինչ այդ քրդերը ժամանակ են շահում: Մարտի սկզբին Թալաբանին հայտարարեց, որ իրենք համաձայն են Իրաքի ժամանակավոր սահմանադրության 58-րդ հոդվածի (ըստ որի Քիրքուկը պետք է մտնի քրդական ինքնավարության մեջ) իրականացումը հետաձգել՝ հանուն երկրում իրավիճակի կայունացման: Թալաբանին նշել է, որ իրենք դեմ չեն, որպեսզի այդ հարցը լուծվի մշտական սահմանադրության վավերացու-

մից հետո: Միեւնույն ժամանակ, Բաղդադում գիտակցում են, որ քրդերը շատ առաջ են գնացել իրենց պահանջներում: Ալ-Ջաֆարին նախքան վարչապետի պաշտոնում նշանակվելն արդեն հայտարարել է, որ դեմ է Քիրքուկի կառավարումը հանձնել քրդերին, քանի որ նման հավակնություններ ունեն նաեւ Քիրքուկում բնակվող սուննի արաբներն ու թուրքմենները:

Քիրքուկը քրդական ինքնավարության մեջ ներառելուն խիստ դեմ է Թուրքիան, որ հանդես է գալիս այդ շրջանում ապրող մոտ մեկ միլիոն թուրքմենների պաշտպանությամբ: Թուրքական շրջանակները մտավախություն ունեն, որ նավթային պաշարներով հարուստ այդ շրջանի միացումը քրդական ինքնավարությանը կարագացնի Քրդստանի անկախության հռչակումը, ինչն էլ խթան կդառնա Թուրքիայում քրդական շարժմանը: Քիրքուկի շուրջ ծագած խնդիրը լարվածության տարրեր է առաջ բերել նաեւ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում:

Յունվարի 30-ի ընտրությունների միջոցով ԱՄՆ-ը փորձեց հնարավորինս սահմանափակել շիաների, հետեւաբար եւ Իրանի ազդեցությունը Իրաքի քաղաքական դաշտում՝ շեշտը դնելով քրդերի վրա՝ որպես առավել ցանկալի դաշնակցի: Բացի այդ, ԱՄՆ-ին ձեռնտու է քրդերի կեցվածքը Իրաքում աշխարհիկ պետության սկզբունքների պահպանման տեսանկյունից: Այս հարցում քրդերը դաշնակիցներ ունեն. նրանց համակարծիք են խորհրդարանում 40 տեղ ունեցող «չափավոր» շիաները, որոնց առաջնորդ Այադ Ալավիի կարծիքով՝ «Իրաքը չպետք է ունենա իսլամական քաղաքական կառավարում»: Սակայն կան շիական արմատական շրջանակներ, որոնք պայքարում են, որպեսզի Իրաքի մշտական սահմանադրության հիմքում ընկած լինեն կրոնական սկզբունքներ: Յայտնի շիա քաղաքական գործիչ Աբդ ալ-Ազիզ ալ-Յաքինը՝ «Իրաքի իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի» առաջնորդը, դեմ է Իրաքում աշխարհիկ պետության ստեղծմանը: Նա հանդես է գալիս իսլամական եւ աշխարհիկ պետության միջին մի տարբերակի օգտին:

Քրդերը պայքարելու են նաեւ մշտական սահմանադրության մեջ պահպանելու անցումային սահմանադրությունում տեղ գտած այն դրույթը, համաձայն որի սահմանադրական ցանկացած նորմ կամ օրենք, որ կմերժվի Իրաքի առնվազն երեք նահանգների ընտրողների 2/3-ի կողմից, չի կարող օրենքի ուժ ստանալ: Նշենք, որ քրդական են երեք նահանգ՝ Էրբիլը, Սուլեյմանիան եւ Դոհուքը: Այդ դրույթի պահպանումը սահմանադրության մեջ մեծ առավելություններ կստեղծի քրդերի համար:

Արդեն լուծված է քրդական զինված ուժերի կամ Ազգային գվարդիայի՝ փեշմարգայի հարցը, որի մեջ ներգրավված են շուրջ 100 000 մարդ: Փեշմարգայի մի մասը կգործի քրդական ինքնավարությունում՝ որպես

նստիկանություն, իսկ մյուս մասը կներգրավվի իրաքյան բանակի՝ հատկապես հատուկ նշանակության ջոկատների մեջ:

Ինչեւէ, Իրաքում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Ընտրություններից հետո թե՛ իրաքցիների եւ թե՛ օտարերկրյա զորքերի շրջանում զոհերի թիվն անցել է 500-ից: Ահաբեկչության թիրախ են դարձել բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականներ, ոստիկաններ, խաղաղ բնակիչներ, առեւանգվել են օտարերկրյա եւ իրաքցի լրագրողներ: Հարձակումների են ենթարկվել պետական հաստատություններ, ավտոշարասյուններ, էլեկտրակայաններ: Վերջին շրջանի ամենամասշտաբային զործողությունը ապրիլի 2-ին Աբու Ղրեյբ բանտի վրա տեղի ունեցած հարձակումն էր, որի արդյունքում վիրավորվել են 40 ամերիկացի զինծառայողներ եւ 12 բանտարկյալներ:

Դիմադրության շարժման հատուկ թիրախ են նավթամուղները: Իրաքում խորհրդարանական ընտրություններից ի վեր տեղի են ունեցել հինգ լայնամասշտաբ հարձակումներ: Իրաքի նավթային նախարարության հաղորդած տեղեկության համաձայն՝ 2003թ. մարտից նավթային օբյեկտների դեմ հարձակումների պատճառով Իրաքը կորցրել է ավելի քան 8 մլրդ դոլար:

ԱՄՆ զինված ուժերի կենտրոնական հրամանատարությունն արձանագրել է, որ վերջին շրջանում Իրաքում նկատվում է օտարերկրյա վարձկանների թվաքանակի աճ, որոնք, ըստ շրջանառվող տեղեկությունների, հիմնականում գալիս են Սաուդյան Արաբիայից, Իրանից, Հորդանանից եւ Սիրիայից:

Իրավիճակը բարդ է ոչ միայն անվտանգության, այլեւ տնտեսական եւ սոցիալական ոլորտներում: Շարունակվում է անկանոնությունը էլեկտրականության եւ ջրամատակարարման ոլորտներում, ինչը հանգեցնում է իշխանությունների նկատմամբ աճող դժգոհությանը: Տնտեսական, սոցիալական եւ կենցաղային օբյեկտների վերականգնումն ընթանում է շատ դանդաղ:

Արեւմտյան, այդ թվում եւ ամերիկյան փորձագետների տվյալներով՝ իրաքցի զինծառայողների եւ անվտանգության աշխատողների պրոֆեսիոնալ պատրաստման գործընթացը շատ դանդաղ է ընթանում: Պենտագոնի ղեկավարության կարծիքով՝ իրաքցի զինվորականների եւ ոստիկանների միայն մեկ երրորդը կարելի է համարել իսկապես մարտունակ: Այսօր շատ վաղ է խոսել այն մասին, որ իրաքյան ուժային կառույցները կարող են ինքնուրույն եւ ամբողջ թափով լուծել իրենց առաջ դրված խնդիրները՝ կապված երկրում անվտանգության եւ կարգուկանոնի հաստատման հետ:

2005թ. փետրվարի տվյալներով՝ Իրաքի ուժային կառույցների մեջ

ընդգրկվածների թիվը հասնում է 136,5 հազարի: Պաշտոնական տվյալներով՝ ամեն օր ինքնական 2500 մարդ ցանկություն են հայտնում մտնել բանակ եւ ոստիկանություն: Միեւնույն ժամանակ, մեծ թիվ են կազմում դասալիքները հատկապես այն շրջաններում, որտեղ ակտիվ են դիմադրության շարժման մարտիկները: Բանակում եւ ներքին գործերի նախարարության մարմիններում կարգապահությունը ցածր է: Իրաքում գիտակցում են, որ ամերիկացիների կողմից հին բանակի եւ այլ պետական ծառայությունների լուծարումը սխալ էր, քանի որ դժվարացրեց ազգային հաշտեցման գործընթացը: Ջտումների արդյունքում՝ տասնյակ հազարավոր մարդիկ կորցրին իրենց աշխատանքը եւ դիրքը, իսկ նրանցից շատերը, իրենց համարելով անարդարության զոհ, համալրեցին դիմադրության շարժման շարքերը: Նրանց մեծ մասը չի արձագանքում ուժային կառույցներ վերադառնալու իշխանության կոչերին:

Իրաքի խորհրդարանը մինչեւ օգոստոսի 15-ը պետք է մշակի նոր սահմանադրություն, որը պետք է հանրաքվեի ներկայացվի: Սահմանադրության հիման վրա երկրում պետք է նոր ընտրություններ անցկացվեն: Թեեւ պետական պաշտոններում էթնոդավանական սկզբունքի ներդրումը կնպաստի երկրում իրավիճակի կայունացմանը, սակայն Իրաքի հասարակության վերջնական համախմբման մասին դեռեւս շատ վաղ է խոսել:

Հիմնական խնդիրներից մեկը կապված է սուննի արմատական գործիչների հետ, որոնք դուրս են մղվում քաղաքական իշխանությունից: Բացառիկ անհանդուրժողական կեցվածք ունի իրաքյան ալ-Կաիդան, որը մերժեց իշխանության հետ երկխոսություն սկսելու Թալաբանիի կոչը: Վերջինս առաջարկել էր զինաթափվել՝ համաներման դիմաց: Ուսամա բեն Լադենի կողմից Իրաքում տեղապահ նշանակված իրաքյան ալ-Կաիդայի առաջնորդ Աբու Մուսաբ ազ-Ջարկավին հայտարարել է, որ իրենք կշարունակեն ջիհադը, քանի դեռ Իրաքում չեն թագավորում իսլամի օրենքները:

Երկրում չեն դադարում նաեւ հակամերիկյան զանգվածային ելույթները: Տասնյակ հազարավոր շիա եւ սուննի իրաքցիներ մասնակցեցին Իրաքի տարբեր քաղաքներում ապրիլի 9-ին Բաղդադի գրավման երկրորդ տարելիցին նվիրված ցույցերին՝ պահանջելով օտարերկրյա զորքերի դուրսբերումն Իրաքից: Մինչդեռ Իրաքի նախագահ Թալաբանիի կարծիքով՝ կռալիցիոն ուժերը պետք է երկրից դուրս գան երկու տարուց ոչ շուտ, քանի դեռ իրաքցիներն ընդունակ չեն սեփական ուժերով ապահովել երկրի կայունությունն ու անվտանգությունը:

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ</b> .....	<b>1</b>
<b>ԿԻՐԳԻՋԱԿԱՆ ԴՐԱՄԱ</b> .....	<b>6</b>
<b>Արսեն Հակոբյան</b>	
<b>ԹԱԼԻՇԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ</b> .....	<b>13</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ</b> <b>ՎՐԱՍՏԱՆՈՒՄ</b> .....	<b>18</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ ԱՄՆ ՄԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ</b> .....	<b>22</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b>	
<b>ԱՄՆ–ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ</b> <b>ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>28</b>
<b>Արտակ Շաքարյան</b>	
<b>ԹՈՒՐԹ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>33</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ԻՐԱՔՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>36</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Հալիճորի բերդը (Սյունիք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: